


ԴՐՕՇԱԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԶԷՅԹՈՒՆԸ ԱՆՉՆԱՏՈՒՐ

Տխուր ու դառն փաստը տեղի է ունեցել — Զէյթունը անձնատուր ու զինաթափ է եղել:

Ապստամբ Զէյթունի ու սուլթանական կառավարութեան մէջ „միջնորդի“ դեր կատարող եւրոպական պետութիւնները յաջողութեամբ կատարեցին իրենց ստանձնած պաշտօնը:

Ծանր է մեզ հաշտել այս մտքի հետ և այն էլ այսպիսի մի ծանր ու դժուարին ընդհանուր թիւն է:

Ներկայ ընդհանուր հասկացող ոչ մի յեղափոխական երբէք չէ կարող ներողամիտ աչքով նայել կատարած փաստի վրայ, որովհետև Զէյթունը անձնատուր լինելով մի բարոյական հարած է հասցնում յեղափոխական շարժման, հայ ժողովրդի յեղափոխական տրամադրութեան: Յեղափոխական շարժման մասին փոքր ի շատէ հասկացողութիւն ունեցողը, երբէք չէ կարող գոհանակութեամբ նայել կատարած գործի վրայ, որովհետև դրանով մենք կորցնում ենք մեր կուսակցական անձնատուր լինելով, յեղափոխական տեսակէտից կատարել է ոչ միայն մեծ յեղափոխական սխալ այլ և մի ծանր գործ:

Այսպիսի մի ծանր ընդհանուր, երբ մեր իւրաքանչիւր մի կուսակց, մի ընդհանուր յեղափոխական գործի յաջողութեան պայմանն է, երբ մեզ հարկաւոր է երկրի իւրաքանչիւր կէտի վրայ կուսակցներ ու ընդհանուրներ յարուցանել, մի կէտի և այն էլ նշանաւոր կէտի անձնատուր լինելը մի տխուր, մի ցաւալի փաստ է մեզ համար, իսկ թշնամուն՝ խրախոյս:

Զէյթունը ապստամբ էր, ապստամբ էլ պիտի մնար մինչև իւր ամենավերջին մարդու ամենավերջին շունչը, որովհետև, եթէ ինքը մինչև իսկ զոհէր, նա իւր արիւնով կը փրկէր շատ թանկագին գործ — նա իւր այդ հերոսական մահով ոչ միայն բարձրացրած, ամրացրած կը լինէր ժողովրդի յեղափոխական տրամադրութիւնը,

այլ և ներշնչած հերոսական ընդդիմադրութեան ոգին, կուսակցական եռանդը, ազատութեան համար մեռնելու պատրաստակամութիւնը, որ յաղթութիւն տանելու անհրաժեշտ և միակ պայմանն է:

Բացի այս բարոյական կողմից, Զէյթունի ընդդիմադրութիւնը ունէր և մեծ նշանակութիւն գործնական տեսակէտից: Գաղտնիք չէ, որ մեր թշնամին մեզնից ուժեղ է, որ նրա դէմ դուրս գալու համար մենք չենք կարող և չպիտի կենտրոնացած լինենք, այլ պէտք է ամեն միջոց գործ դնել նրա ուժերը՝ բաժանել, ցրել, ջլատել, իսկ դրան կարելի է հասնել, երբ մենք իւրաքանչիւր կէտում կը հանենք ապստամբական հայդուկային խումբեր: Կուսակցական այս սխալները միայն յատուկ չէ թողլերին... Այս այսպէս լինելուց յետոյ, հասկանալի է, որ եթէ Զէյթունը շարունակէր իւր ընդդիմադրութիւնը, նա շրջապած, զբաղեցրած կը լինէր կառավարութեան զինուորական ոյժի մի մասը, հետեւապէս և միւս կէտերը աւելի հեշտութեամբ կարող կը լինին վարել յեղափոխական շարժումները, կուսակցական: Մինչդեռ Զէյթունը անձնատուր ու զինաթափ լինելով, նա այդ նշանաւոր կէտում ապահովեցնում է կառավարութեան ու նրան հնարաւորութիւն տալիս աւելի ոյժ կենտրոնացնել մի այլ „կասկածելի“ կէտում, հետեւապէս և յաջողութեամբ առաջ տանելու իւր կուսակցական յեղափոխականների դէմ:

Զէյթունի անձնատուր լինելու խնդիրը դնելով յեղափոխական տեսակէտից, մենք երբէք չենք կարող նրա այդ վարմունքին նայել հաշտ աչքով ու ներողամիտ սրտով:

Բայց ի՞նչ պայմաններում է Զէյթունը անձնատուր ու զինաթափ եղել, նա, որի անունը միայն ոգևորում, խրախուսում էր այնքան սրտեր: Այդ վագրերը, որոնք դիւցազնաբար միշտ կուսակցական պաշտպանել են, շնորհիւ այն հանգամանքի, որ նրանք եղել են մենակ և զուրկ ապրուստի միջոցներից ու օգնութիւնից, որ քաղցը մի կողմից, մերկութիւնը և սառնամանիքը միւս, սպառնացել են նրան ոչնչացնել, շնորհիւ այդ ծայրայեղ թշուառութեանց, այդ յուսահատական հանգ-

մանքների անձնատուր են լինում, ընդունելով երեք ծանր պայմաններ.— ա) յանձնել պատերազմական զենքերը, բ) կառավարութիւնը իւր ցանկացած քանակութեամբ զօրք պահի, գ) արտաքսել իւր մէջ գտնուող օտարական յեղափոխականներին:

Յանձնել պատերազմական զենքերը, ասել է զրկել իւր պաշտպանից, իւր կռելու միջոցից, իրեն դնել թշնամու տրամադրութեան տակ, ենթարկել նրա քրմահաճոյքին և այն էլ այնպիսի մի թշնամու, որի տմարդութիւնը ու պոռնիկ բնաւորութիւնը յայտնի է ամբողջ աշխարհին, որը զուրկ է ասպետական յատկութիւններից ու մարդկային արժանապատուութիւնից: Դեռ շարունակել հաւատալ այդ դարձելի խաբեբային, կը նշանակէ ուղղակի իրեն կրակի մէջ ձգել, յօժարակամ թոյլ տալ, որ իրեն ոչխարի պէս մորթեն: Այսպիսի պայմանում ինչո՞ւ զէնքը ձեռին չմեռնել:

Ձէյթունցին գործելով այս առաջին մեծ սխալը, նա գործել է և մի երկրորդը, համաձայնելով, որ սուլթանի կառավարութիւնը Ձէյթունում պահի այնքան զօրք, որքան իրեն հաճելի է: Ուրիշ խօսքով, Ձէյթունը իրեն դրել է սուլթանի զինուորական ըէժիմի, նրա մարդասպան օրի տակ, որով միջոց է տւել դարձելի կառավարութեան վարելու իւր քրմահաճոյքի համեմատ— Ձէյթունը իրեն ենթարկել է կոտորածի վտանգին:

Մեզ միանգամայն անհասկանալի է, թէ ինչպէ՞ս է զէյթունցին հաւատացել այդ Մեծ-Ոճրագործին այսքան դառն փորձերից, անթիւ կոտորածից յետոյ, ի՞նչպէս է կարողացել հաւատալ նրան, որը հազար ու մի երդումով, յազնիւ խօսք՝ տարով հաւատացնում էր ժողովրդին՝ որ եթէ զինաթափ լինի, նրան կը պաշտպանի, կազատի կոտորածից. և կոտորածը սկսում էր հենց զինաթափ անելուց յետոյ: Գո՞ւցէ եւրոպական հիւպատոսների ներկայութիւնն է այդ հաւատը ներշնչել միամիտ ժողովուրդ: Ի՞նչ տարբերութիւն Մեծ-Ոճրագործի ու եւրոպական կառավարութիւնների-գողի և գողակցի, մարդասպանի ու մեղսակցի մէջ, այն կառավարութիւնների, որոնք ոչնչով արդելք չեղան սարսափներին, ոչնչով չպաշտպանեցին մորթուող հարիւր հազար մարդկային արարածներին և որոնք վաղուց թըքել են իրենց պատւի ու խօսքի վրայ: Մի թէ Պոլսի դէպքից յետոյ, այլևս հաւատ է մնում դէպի այդ մեղսակիցները. ի՞նչ տեղան այն խեղճ մարդիկը, որոնք այդ պետութիւնների ներկայացուցիչների այցելատուներն ունէին իբրև առհաւատչեայ իրենց կեանքի ապահովութեան, ո՞ւր են նրանք, դրանք այժմ շնորհիւ այդ յապահովող տոմսերի՞ կամ բանտերում են, կամ արտաքսվալով շղթայի տակ և կամ Մարմարայի յատակում: դարձեալ հաւատալ դրանց խօսքին:

Բայց ի՞նչ կանի քաղցածն ու սովածը, ջրի մէջ խեղտուողը: Ձէյթունցին էլ այդ դրութեան մէջ է ե-

ղել: Եւրոպական հիւպատոսների նկարագրած այն ծայրայեղ թշուառութիւնը, որի մէջ են եղել ապստամբները, փշաքաղում են մարդկանց: Ի նկատի առնելով այս հանգամանքը, հասկանալի կը լինի, թէ ինչու քաջ Ձէյթունը անձնատուր և զինաթափ եղաւ, համաձայնեց, որ Մեծ-Ոճրագործը Ձէյթունում պահի այնքան զինուոր, որքան իրեն ցանկալի է, թոյլ տաւ դուրս քրչել այնտեղ գտնուող յեղափոխականներին, փոխարէնը ձեռք բերելով մի քրիստոնեայ գայմագամ:

Ինչ վերաբերում է այս վերջին կէտին, արդէն մենք առիթ ենք ունեցել դրա մասին մի քանի անգամ խօսելու, շեշտելով՝ որ կրօնը ոչ մի նշանակութիւն չունի քաղաքական խնդիրներում, որ քրիստոնեայ պաշտօնեան կարող է նոյնպէս մի չարիք լինել, ինչպէս մահմեդականը:

Բայց այս տխուր իրողութեան մէջ կայ մի կէտ, որ արժանի է ուշադրութեան և որտեղ փայլում է զէյթունցու վեհանձնութիւնը ու հոգու բարձրութիւնը, որով աղատուսէր զէյթունցին հաւատարիմ է մնում իւր դարաւոր նւիրագործած ազատութեան.— զէյթունցին թէև համաձայնեց դուրս քշել իւր միջից օտարական յեղափոխականներին, բայց նա ոչ մի պայմանով չհամաձայնեց յանձնել թշնամուն իւր Գլխաւորներին, նա մատնիչ, դաւաճան չդարձաւ, և որով միայն մի փառաւոր դաս տաւ ստոր թշնամուն ու յմարդասէր քաղաքակրթածներին՝ մերժելով նրանց տմարդի պայմանը:

Այս բոլորից մենք եզրակացնում ենք այն, որ Ձէյթունի նախկին և այժմեան դրութեան մէջ քաղաքական տեսակէտից ոչ մի փոփոխութիւն չէ, մտել, նա նոյն հարկատուն է, նոյն ստորագրեալը. նա այժմ էլ ինչպէս անստամբութիւնից առաջ, դատուում է Մեծ-Ոճրագործի տրամադրութեան տակ և երկիւղ կայ, որ զօրքը այնտեղ հաստատուելուց յետոյ, վրէժխնդիր կը լինի՝ կոտորած անելով: Մեծ-Ոճրագործը դարձեալ յաղթութիւն տարաւ, այս անգամ էլ շնորհիւ եւրոպական պետութիւնների աջակցութեան:

Ձէյթունի այս անկումը մեզ չի վհատեցնիլ, ինչպէս որ չվհատեցրին հարիւր հազար զոհերը, կռիւր շարունակոււմ է և կը շարունակւի. հայ ժողովրդի և Մեծ-Ոճրագործի մէջ ոչ մի պայմանով հաշտութիւն լինել չի կարող. երկուսից մէկը պիտի ոչնչանայ:

Գրեալ

ՉԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏՍՄԲՈՒԹԻՒՆԸ

Ն Ա Մ Ա Կ . . .

25/6 փետուարի

Վերջապէս դրած նամակներուս պատասխաններն ըսկսայ ստանալ: 1896 թ. յունւար 11/23-ի. . . դրած նա-

մակ մը, որուն հեղինակը խիստ վստահելի և գործերու հմուտ անձ մ'է, Ուշիոյ խնդրոյ մասին հետեւեալ տեղեկութիւնները կուտայ. «Թուէս երեք ամիս առաջ Ուշիոյ ապստամբութեան լուրը առնելուն պէս, կառավարութիւնը խիղջ քսանութը գունդ զօրք ուղարկեց հոն, այս ժամանակամիջոցին մէջ (երեք ամսուան) Զէյթունէն հինգ ժամ հեռաւորութեամբ երեք անգամ ճակատամարտ տեղի ունեցած է, այս ճակատամարտներու մէջ հինգ-վեց հազար պաշտպանուկ և տասը հազարի չափ ևս զօրք ջարդուած է, մինչդեռ զէյթունցիներու կողմէն եղած կորուստը գրեթէ ոչինչ է ու ձեռքերնին շատ մը ռազմամթերք և պաշար ևս անցած է: Ասկէ երկու օր առաջ Բերիոյ հիւպատոսներէն վեց հօգի Զէյթուն գնացին: Այնթապի մէջ հինգ հարիւր հօգի ջարդուեցաւ, խիստ մեծ կողոպուտ և բաւականաչափ ևս հրձիգութիւն տեղի ունեցաւ. թէ նահանգիս և թէ ուրիշ նահանգներու մէջ ջարդուածներու թիւը մինչև հարիւր հազար կը կարծուի: Վաթնիկներէն զատ գրեթէ բոլոր քրիստոնէից երեւելիներն ձերբակալուելով՝ Հալէպ ուղարկուեցան»:

... յունւար 23/4 գրուած նամակ մը, որ նոյնպէս վստահելի է, հետեւեալ տեղեկութիւնները կուտայ. «Երեք օր է, որ սկսաւ զէյքի տակ առնուած ըւտիֆներուն արձակելը, այնպէս, որ իւրաքանչիւրը իրենց հայրենիքը ձամբու գրին. բայց պատճառն ի՞նչ է, չըբիտցելի տակաւին: Հոս կը խօսուի, թէ Ալի պէյը գերի բռնած է, զէյթունցոց յաջողութիւնները խիստ լաւ են: Հալէպէն ելնող վեց հիւպատոսները Վարաշ հասած են: Ճանապարհին (գէպի Ուշիա) ջորիներն ու ջորեպանը սառած են, շէք գիտեր թէ իրենք ուր մնացին (պաշտօնական հեռագրի համեմատ յունւար 15/27-ի հիւպատոսներուն Զէյթուն հասնելը գրած էի նախորդ նամակովս): Պահրի փաշայէն զատ՝ ուրիշներ ալ կան եղեր: որպէս թէ (գերի բռնուողներ կուգէ ըսել): Հոս հիմա խիստ հանգստութիւն կը տիրէ, ջերմաչափը իջնելու վրայ է, ականջնին կախուած է. իրենց (թիւրքերու) պատմածներուն նայելով, Ալի պէյը հոն մտած է և բոլորը գերի պիտի բռնէ եղեր. անցեալները 15000 օգրա պարան ուղարկելու դիտաւորութիւննին, որպէս թէ գերիները կապելու համար է եղեր, (այս խօսքերը, ի հարկէ, ծաղրական մաքով գրուած են), վայ՛ ապուշներ, վայ՛»:

«Մերսինի Անգլիական հիւպատոս Մըթըրը Տիլլօն (որ գինովին մէկն է), պաշտօնանկ եղաւ և տեղը Թերաւ քօնսիւլ մը եկաւ. հոս եկաւ, մէկ օր մնաց և Սիս պիտի երթար, բայց յետաձգեց, պատճառն անյայտ է»:

Զմիւռնիոյ Անգլիական հիւպատոսը, որ Զէյթուն և շրջակայքը ջարդ եղած վայրերը տեսնելու և քննելու համար գնացած էր, երկու օր առաջ հոս եկաւ: Թէպէտ ձմերան խստութեան և ձիւներու շատութեան պատճառով չէ կարողացած Զէյթուն մտնել, սակայն շրջակայ վայրերը պտտած է. այս պաշտօնական անձի վկայութեան համեմատ Զէյթունի վիճակը լաւ է, իսկ պաշարող զօրքերուն մէջ հիւանդութեան պատճառով մեծ կորուստ կայ եղեր:

Գալով Սիլիկիոյ ընդհանուր վիճակին, թէ ինձ և թէ ուրիշներուն եկած նամակները միաձայնութեամբ կը հաստատեն թէ, ի բաց առեալ Ատանան և շրջակա-

ները, ամբողջ Սիլիկիան նրութապէս և բարոյապէս ոչընչացած և գրեթէ աւերակ դարձած է:

Ուղղակի Զէյթունէն եկած լուր չկայ:

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Ի Յ

(Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Կ Պ Ո Լ Ս Ի Յ)

Զէյթուն գնացող եւրոպական հիւպատոսները հեռագրում են իրենց դեսպաններին, թէ Զէյթունի 8000 հայոց մէջ սոսկալի թշուառութիւն և չքաւորութիւն է տիրում: Անթի, մերկ, հացիւ միքանի կեղտոտ քուրճի կտորներով ծածկուած, հիւանդները, վիրաւորուածները ընկած են դիակների մօտ, որոնք տաքանալու համար դիակներին և իրար են կպչում: Տեսարանը քրտմեցուցիչ, սրտաճմլիկ է:

Ուստի Պոլսի դեսպանները որոշեցին հանդանակութիւն բանալ յօգուտ այդ դժբախտների:

Տեղական իշխանութիւնը, Հալէպի ֆրանսիական, իտալական և անգլիական հիւպատոսների օգնութեամբ և հսկողութեան տակ, Զէյթունում ապաստանած հայերը աշխատում է վերադարձնել իրենց նախկին տեղերը. ուր նրանք թէև բնակարանից բոլորովին զուրկ են: Հիւանդները պիտի ենթարկւեն բժշկական քննութեան և պիտի խնամուեն այն հիւանդանոցում, որ վատ թէ լաւ շուտով պիտի կառուցուի: Երեք քրիստոնեաներից և երեք մահմեդականներից կազմած մի մասնատողով պիտի հսկէ այդ գործողութիւնների վրայ, պիտի կերակրէ սովեալներին վիլայէթի սնդուկի հաշուով և Այնթապի ու Վարաշի մէջ ժամանակաւոր բնակարաններում պիտի խնամէ այն գիւղացիներին, որոնց գիւղերը աւերուած են:

Վ Ա Ս Պ Ո Ւ Ր Ա Կ Ա Ն

Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Յ Դ Ո Ւ Կ Ա Յ Ի Ն Խ Մ Բ Ի

Ս Ա Ր Ա Բ Օ Ղ Ա Ջ Բ Ե Ա Ս Ա Ն Ի

Ա Ր Ի Ի Ն Ա Հ Ե Ղ Կ Ռ Ի Ի Ը

Փոթորիկը պայթեց: Այդպիսի մեծ, յամառ և արիւնահեղ կռիւ առաջին անգամն է պատահում թուրք-սիրտ վասպուրականում: Յիշենք շարժառիթը:

Հոկտ. 12-ին, դեռ կէսօր չեղած՝ վանի շուկայում մի շուկ է անցնում. իսկոյն մէկը միւսի ետեւից իսնութները գոցում ու կծիկ դնում դէպի Այդեստան. — կառավարութիւնը գաղանի զէյք էր բաժանում թիւր-

քերին. էլ գաղտնին դարձաւ յայտնի, այժմ ամենքիս աչքի առաջ դադարկուում է կառավարութեան զէնքի պահեստը, զինուում է արագաբար թիւրք խուժանը:

13-ին, սովորականից դուրս զինւած, խմբով համի-դիականներ երեւցին Վանում այլ կերպարանքով: Նոյն օրը սկսուում է Արծկէի, Արձէշի աւերումն ու կոտորածը: Վանի Այգեստանի պահականոցները կառավարութիւնը դուրս փակցրեց՝ ուր հայերը բազմամարդ էին, թիւրք տուններն էլ հայ թաղերից փական: Ցագնապ, սարսափ է ամեն ուրեք: Շուկան շարունակ գոց, թիւրքները լցւած են, խուժանը մարթինով է դուրս ներս անում: Հայերը սրբում են հրացանները և սրում իրենց սրերը: Արդեօք ո՞վ ումից է վախենում, դժւար է որոշել:

Այս սարսափի ժամանակ, Վասպուրականի Գաշնակցութեան Վեդրոնական Կօմիտէն անհամբեր սպասում էր հայդուկային մեծ խմբի, որը տարաբախտաբար ուշանում էր: Վեդրոնական Կօմիտէն ի նկատի առնելով ընդհանուր տագնապը, անմիջապէս մի ձիաւոր սուրհանդակ է հանում արտասահման:

Հոկտ. 23-ին դուրս է գալիս Գաշնակցութեան ըստ-ւար հայդուկային խումբը՝ ծանր կերպով սպառազինւած, այդ թւի վրայ աւելանում են նաև 16 հոգի արմենականներ, որոնք նոյնպէս տեսնելով հայրենիքի վտանգը՝ առաջարկում են միանալ Գաշնակցական խմբի հետ: Այս շարժման աւելի ձիշտ է արշաւանք անւանել:

Խմբի դուրս գալուց երկու օր առաջ, լեռները ձիւնով ծածկւեցան, բայց այդ չէր կարող արդեւք լինել հայրենիքի զինուորներին:

Հոկտ. 25-ի գիշերը խումբը առանց ընդհարումի անցաւ սահմանազուլիւր: Անտանելի էր այդ գիշերւայ սաստիկ ցուրտը. ձիւնն այդ լեռներում կէս արշին հաստութեամբ նստել էր, ճանապարհը բոլորովին փակւած էր: Հայդուկները, անպատմելի, անկարագրելի նեղութեամբ, ձղում էին ձիւնը, թէև դանդաղ բայց միշտ յառաջ են շարժւում: Մի քանիսնների ձեռք ու ոտքերը ցուրտը տարել էր, ուստի դժւար էր նշանակւած տեղը հասնել: Յառաջընթաց խմբակը 11 հոգուց բաղկացած՝ կէս վերստի չափ հեռի, իր առաջնորդով անշեղ գնում էր, այն ինչ յետին խմբակների մէջ կասկած առաջացաւ՝ թէ ճանապարհը սխալ է: Մինչ այս, մինչ այն, առաջընթաց խումբը անհետացաւ, կարծելով թէ մնացածները հետևում էին իրենց: Այդ ճամբան ձիշտ էր:

Ետ մնացածները, նկատելով միևնոյն ժամանակ, որ շուտով կը լուսանայ, իսկ առաջները Սարան է, դուրս եկան ճամբից և մտան մի փոքրիկ ձորակ ու բարձրանալով՝ ամուր դիրք բռնեցին Ինկիզ-Թափա կոչւած բլրի վրայ: Գիշերւայ դժոխային ճանապարհից այն աստիճան ուժասպառ էր դարձել խումբը, որ քայլ անգամ չկարողացաւ փոխել, թէև իրեն շատ մօտ լաւ դիրք ունեցող սարեր կային:

Անջատւած խումբը առաջ գնալով՝ Սարայի մօտ ընկնում է բանուկ ճանապարհի վրայ և իր հետքը կորցնելով՝ գրեթէ ցրտահար, պաղած, ձգում է իրեն մի ոչխարի փարախ, որ կիսաւեր և դատարկ էր:

Արևը ծագեց: Ինկիզ-Թափայի հայդուկները սառած ձիւն վրայ թափւած՝ բոլորովին թմրել են, ատամներ-

ըր կափ-կափում են ցրտից. նրանց նայելիս՝ կարծում ես շատերն արդէն պաղած, անշնչացած են: Ով գլուխը բարձրացնում, թարմ ձիւնի վրայ թողած հետքը տեսնում՝ ասում էր. «Այսօր մի ցանկալի փոթորիկ պիտի պայթի, բայց ախոս, որ ոյժ չի մնացած»: Եւ ձիշտ ժամը 2-ն էր (եւր. 8), երկու քիւրդ հետքը բռնած, դիտելով որսի շան պէս հոտ քաշելով, կամաց կամաց զգուշութեամբ մտնում են Ինկիզ-Թափայի ձորակը: Հայդուկ պահականը դիտակով նկատեց այդ և իմաց տւեց խմբին:

Քիւրդերը մօտենում են նախկին զգուշութեամբ անցնելով մի բլրի քամակ, այնտեղից վիզները հաւի նման բարձր-ցածր անում, և խումբը տեսնելուն պէս, պուկ մօտակայ գիւղը: Հաւար... հաւար... Հաւարը փրթաւ, և կայծակի արագութեամբ տարածւեցաւ բոլոր քիւրդ գիւղերն ու Սարա:

Երեւցին երկու ձիաւոր և տեսնելով խումբը, երկու անգամ հրացան արձակեցին, որ դարձեալ հաւարի նշան էր: Հաւար են գոռում սարեր, ձորեր, գիւղեր, հաւար զօրքն ու զաֆթիան: Թափւեցին ամեն կողմից համիդիա ձիաւորները. «Հա, հա, հա... կաշողէ Փրլայ, կաշողէ Փրլայ (հայ կաշողներ), հիմա ձեզ կը կոտորենք, հիմա, հիմա, ձեզ ջուրի պէս պիտի խմենք», գոռում էին աւազակ համիդիաները. «Չանֆիդայիլար (անձնէրներ), էլ ուր պիտի ազատէք մեր ձեռքից», գոռում էին անվարտիք զաֆթիաները:

Հայդուկները զէնքի գլուխ կանգնեցին. թմրածները, ցրտահարները սաղացան, մեռածները յարան: Պաղած մարմնի կրակոտ սրտից պատառելով դուրս թռաւ դաշնակցական հայդուկի երգը. — «Տուր ձեռքդ եղբայր» և «Միփանայ սարեր»: Երկու կողմից կրակ, կարկուտ է թափւում, պայթում ու պայթում են իրար ետեկից գնդակները: Պայծառ արև էր: Ծխի անթիւ քուլաները ամպի նման օրօրելով բարձրանում էին երկինքը: Լէշակեր քիւրդերի ձիաւոր խմբերը հա գալիս են անհատնում: Սար ու դաշտ բռնւեց: Հաւարի եկած էին չորս աշիրաթներ, մլանցիք, թակուրցիք, մուկուրցիք և շամկցիք: Վեսօր վերջ նրանց թիւը հազարի հասաւ, հինգ հարիւրից մինչև վեց հարիւր ձիաւոր, մնացածը հետիոտ: Հետզհետէ խումբը երեք կողմից շրջապատւեց: Վեսօրից վերջ կուրը աւելի սաստկացաւ. հրաշք էին գործում Գաշնակցութեան նոր (Մօսին) հրացանները, որոնք մարթինի մէկ և կէս տարածութիւն են կարուծ:

«Ննկաւ, ընկաւ, տղերք ջան, հրէ ձիուց քիւրդն ընկաւ», իզուէց մի հայդուկ. «Ահա երկրորդը ձիուց կախ ընկաւ», գոռաց մի ուրիշ հայդուկ:

«Ննկերներ, ձեզ մատաղ, որոտաց խմբապետը, խրփեցէք, յաջողուում է մեզ մեռնենք մինչև վերջին ընկերը՝ մեր բազմաչարչար սուրբ հողն վրայ: Զարկեցէք, թող անընդհատ սուլեն մեր գնդակները: Բայց միայն փամփուռաների հետ զգոյշ էլի կուր կուսենանք...»:

Յանկարծ լուեց գալարափողի ձայնը: Դա կանոնաւոր զօրքն էր, որ 60-ի չափ բռնել էր խմբի ետևի կողմը և զալպով (միանալով) կուռում:

Սարայի միրալայը (հազարապետից բարձր) վօրքը հանում է կուր դաշտը, ապա սարսափած ու փոշմանելով գոռում է՝ «գերի դեօնուեւ, գերի դեօնուեւ, (եւ դարձէք) պու քեաֆիր ջանֆիդէյլար սըզի կուարլար»: Կեսօրից յետոյ առաջին նահատակն ընկաւ, դա սըշ-

տունցի Ա...ն էր, որ իսկոյն հոգին աւանդեց: յՅԵ-
ցի'նք առաջին նահատակը, ընկերներ, բղաւեց մէկը...
վրէժ, կրակ, կրակ թափեմք թշնամու գլխին, սրբազան
օր է այսօր": Աւելի եռանդով, աւելի կրակոտ որո-
տում էին հայդուկների հրացանները: Քառասուն հո-
գուց բաղկացած խումբը հուր էր թափում հազարա-
ւոր թշնամու գլխին:

Ցածրի բլուրը կէսօրից յետոյ վտանգի է ենթարկ-
ւում: Նշանաւոր կտրիճ Փաշոն մօտ 50 հոգով յան-
դուգն կերպով յառաջանալով մեր դիրքին, վարպետու-
թեամբ քիչ էր մնում հայդուկներին դիրքից հանելը,
սակայն շուտով խմբապետը և մի քանիսը հասնում
են, դիրքն ազատում և Փաշոն ընկնում է: Երեկո-
յեան դէմ մեզինց հետո՛հետէ ընկան՝ Փանոս, Ազգար,
Սարմաստցի Աւետիս և ուրիշներ: Այրաւորած էին ե-
րեք հոգի: Մուծը կոխելով, կուրն հետո՛հետէ սկսում
էր մեղմանալ: Ինչպէս ասինք, կուրը վերջանում է ժամ
2-ին (եւր. 8-ին): Այդ օրը յաղթութիւնը կատարեալ
մեր կողմն էր: Եթէ ձիւնը չլինէր, մեր յաջողութիւնը
քառասպատիկ պիտի լինէր: Կուր գաշտում թողնում ենք
վեց նահատակներ:

Հայդուկների վիճակը աւելի անտանելի էր, քան
նախկին գիշերը: 10 ժամ ոտի վրայ, յոգնած՝ շարժ-
ւելու ճար չկար: Ձիւնից թրջւած շորերը, արևը մայր
մտնելիս, ցրտից փայտ դարձան: Իսկապէս մեր կորուս-
տը գիշերը ցրտից շատ եղաւ՝ քան թշնամուց: Թէև
կուրը դադարած, բայց թշնամին դեռ մեզ շրջապա-
տած էր: Մենք խաբս ենք տալիս նրանց, մի մասը
կրակ է անում, իսկոյն իր դիրքը փոխելով, դրանով
մնացածները աշխատում են իրենց հետքը կորցնելը:
Պէտք էր շրթան ձղել, որ ըստ երևոյթին շատ դժ-
ւար էր, որովհետև մեր մէջը քարոյներ շատ քիչ կա-
յին, մի կերպ քաշ էին գալիս:

Գիշերւայ լուսութեան մէջ կրկին պայթեցին հայ-
դուկների գնդակները, թշնամին ժրութեամբ պատա-
խանում էր, նա դեռ չէր շարժւում իր դիրքից: Բոպէն
ծանր էր, մի սխալ քայլ՝ և շատերս կորսւած էինք,
ամեն վայրկեան թակարդ կարող ենք ընկնել, իսկ
քիւրդը միշտ դարան է լարում և նրա յաջողութիւնը
դարանումն է: Երկինքը ամպամած է, այդ մեզ շատ օգ-
տակար է: Յուրաք զօռում է, սկսում ենք դողալ և
ատամներս կրճատացնել: Մենք կրկին հրացան պարպե-
ցինք, այս անգամ աւելի զօրեղ և դիրքը փոխելով
Գիշերն անցնում է, ամեն մէկ բոպէն մեզ համար ան-
դնահատելի է, ահագին ձիւնապատ ճանապարհ կայ
մեր առաջ, իսկ մենք չենք կարողանում քաշել: Երևոյ-
թը փոխւում է. յուսոյ նշող կայ, կարծես մեզ յա-
ջողում է շրթան ձղել: Թշնամին կրակ արեց, բայց իր
դիրքը փոխած: Նրանք կարծում են, թէ մենք եւս պի-
տի դառնանք դէպի սահմանադրւելու, ուր մեր փրկու-
թիւնը աւելի հաւանական էր: Գարձեալ կրակ և մեր
դործողութիւնը, ներկայութիւնը ցոյց աւելնք բռնելով
մամուլի հակառակ կողմը: Ըզթան ձիւնը, դարանա-
մուտները քաշւած են, մենք քայլում ենք: Ահա այս-
տեղ է մեր աւած սե՛ծ կորուստը: Ըզթայից անցնելու
ժամանակ, ինչպէս և կուր ժամանակ, մենք խմբապետի
էինք բաժնուած և աշխատում էինք իրարից բաւախան
հետո՛ մեալ: Իրար կորցրինք, ոմանք ուժասուպա եղած՝
չէին կարողացել հետևել ընկերներին գտնել ոմանք:

Ճանապարհ չգիտէին և չկար, միայն երևում էր մա-
քուր, սպիտակ ձիւն: Նոր ճանապարհ պիտի որոշէր ա-
ռաջնորդ Պ...ն լեռ-լեռ, որպէս զի դարանի չհանդի-
պենք:

Խուճը ցիր ու ցան սկսում է առաջանալ, յետոյ
կամաց կամաց մէկ մէկի գտնում ենք և ամփոփւում,
բայց և այնպէս հոկտ. 26-ի գիշերը 14 հոգի անյայտ
մնացին:

Աննկարագրելի նեղութիւններով, ցրտից ընդար-
ժացած, բայց և այնպէս գնում էինք: Մի փոքր հան-
գիստ առինք Մամադ-Ալանի Քուէք կողմած սարի վրայ
ու կրկին շարունակեցինք: Ձենք կարողանում շարժել-
ում ոտքերը ցուրտը տարել է, տանջւում է, դա մի սրբ-
տամաշ տեսարան է, չենք կարողանում ու գնում ենք:
Սրբազան Գաղափարը, մեր թշառ եղբայրների դրու-
թիւնը, օգնութեան հրաւերը, ահա այն զգացմունք-
ները, որ իրար խառնելով մեզ քշում է:

Լոյսը բացւեց, մենք հասանք Բօղաղ-Քեծասան, այն
գիւղը, որը խորովւած է, որը տւել է յեղափոխու-
թեան ինչ որ ունէր և այսօր աւերակ պիտի դառնար:

Իսկոյն թափւեցին մեր առաջ պատու կանայք և մի
քանի խեղճ տղամարդիկ: ՚ի սէր Աստուծոյ, աման, շու-
տով զօրք, քիւրդերը կը դան, գիւղ մի մտնիք, ձեր
հետքը բոլորովին յայտնի է, մենք ոչինչ չենք ինայեղ,
բայց այսօր լե՛ռը, լե՛ռը": Իսկ մինչև լեռը հասնելը 2
ժամ պէտք էր: Մենք շարած ենք, մի քայլ չենք
կարող առաջանալ, այդ անհնար է, ոչ ոտք և ոչ
ձեռք կայ: Չլսեցինք, մտանք մի տաք գոմ, խոստանա-
լով մի քիչ տաքանալուց յետոյ լեռը քաշւել:

Մենք գիւղում երեք տեղ ապաստանեցինք:

Հազիւ մի մի պատառ հաց կերանք, ոտներնիս հա-
նեցինք: Յրտահար ոտների դուլպանները հանելիս՝ շա-
տերի ոտքի կաշին պոկւում էր հետը, մի քանիսին
էլ ուռել էր: Ամենքս էլ չորացած, կուցած ծերունիի
էինք նմանում, մեր վրայ մարդկային կերպարանք չէր
մնացել: Լսեցինք որ գիւղում պատուներ և մի քանի
տղամարդիկ էին մնացել, դրանց թուում և վատանում
Աւետը: Պահապան դրեցինք ու քնեցինք: Նա էլ էր
քնացել, մեզաւոյ չէր, երկու գիշեր և մի ցերեկ մեր
աչքերը չէին փակւել:

Հազիւ ժամ ու կէս քնել էինք, գիւղացիները աղ-
մուկով մեզ զարթեցրին: Նրանք սարսափահար, ձեռ-
ները շփշփեցնելով բացականում էին, ղվեր կացէ՛ք,
քիւրդերը, քիւրդերը, շուտով և զօրք կը հասնի":
Մենք հազիւ կարողացանք մեր գուլպաններ մի կերպ
հագնել: Իսկուք ահագին աղմուկ, իրարանցում է տի-
րում, լսում էինք վայրենի քիւրդերի խուպսո հոգնո-
րային ձայները և անվերջ լս-լսւմները: Չմոռանալք
խոստովանել՝ որ լաւ տաքացել էինք:

Քիւրդերը մեր հետքով գանք էին մեր ճիւղաւոր:
Չանցած մի քանի վայրկեան, ամանի ծագելից զընդ-
դընդայն դիրն, մենք քաշւեցինք անկիւնները: Պարզ է
որ շրջապատւած ենք և դա շատ վտանգաւոր ու ա-
ւելի ծանր էր, քան Մարայի գիւղը: Մենք լուռ սպա-
սում ենք թէ ինչ պիտի անեն: Գոմի գոռոզ փոքրեց
քրդերի սպառնալիքով: Քնեցինք Աւետը և իբր պատ-
դաստար քրդերի պատմանէն յայտնեց: ՚ի ինտելեկտի
եղէք և նրանք մեզ անմնաց, անքառ կը թողնեն":
Խմբապետը պատասխանեց:— Գնա՛, հացերդ ստա, որ

քիւրդերից զատեն, իսկ թէ մենք ինչ կանենք, այդ մեր գործն է: Չանցաւ մի քանի բողոք, քիւրդերն սկսեցին ահագին քանակութեամբ խոտի խուրձեր հետ-ից ձգել դրան առաջ, որով դժբաղաւ մի դէպ վերջն էլ մի վառած խուրձ ձգեցին այդ բողոքի վրայ: Մենք լուռ ենք: Սկսեց հրդեհը, կոտորած դուռը այրում էր, ծուխը քիչ քիչ խեղդում էր մեզ: Պէտք էր դուրս թուշել, բայց ի նկատի ունենալու է, որ քիւրդերը տասնեակներով դուռը բռնած և դուրս նշածին պիտի դուրսնան, ուրիշ ելք չկայ: Ինչքան ժամանակաւոր կուղեաներ կային՝ շիտակեցան, ցրտահար, ուռած ոտքերը սաղացան...

Որոշումը որոշում էր, «դուրս, դուրս թուշել կեցցէ՛ հայրենիք, կեցցէ՛ն հայրուհիներ... Ամենքի բերնից կը բակ է թափուում: Մի ընկեր հրացանով բոցավառ խոտերը դէս ու դէն է անում և առաջինը խմբապետը դուրս է թաքում բոցերի միջից: Նոյն վայրկենին տասնեակ հրացաններ տրաքում են խմբապետի և նրա ետևից դուրս եկողների վրայ և ոչ մինը չի բռնում: Արակ դարձած հայրուհիները անվեհեր կերպով հանդիպում են երես երեսի քրդերի հետ: Այդպիսի մոմենտում քիւրդը չի կանգնի և նրանք սարսափահար փախչում են: Մերոնք ոչխարի նման քշում են դուրս՝ կոտորելով: Քիւրդերից 15 հոգի՝ ընկան, որոնց թուռն էին Միլիազլիմ Ջնդին և դեր հազարապետ Շաւէշ: Մերոնցից և ոչ մի հոգի չմնասեցաւ: Մեզ յաջողեցաւ խլել վեց հրացան և 8 ձի, որոնց օգնութեամբ անմիջապէս մտակայ Յաղթաբաղ լեռը դիրք բռնեցին մեր մի քանի ընկերները:

Քիւրդերն ուշքի դալով՝ նորից դարձան մեզ վրայ, լեռը բարձրանալու ժամանակ շուտով Հազարա փուղից հասան և 30 սևարի զափթիա, մէկ միլիոնով: 2 ժամ տևեց այդ երբեմն ընդհատող կռիւը, քրդերից ընկան 3 հոգի և միլիոնով վերաւորած է: Երբ ամենքս անմնաս հասանք լեռան գլուխը, կռիւը դադարեց: Այդ փշերը մեզ յաջողեց հետքը կորցնել ու անհետանալ: Մենք շատ ուրախացանք, երբ յաջող դիշերը հանդիպեցինք սահմանադիտում կորած խմբակին (գրանց մէջն էր մեր ընկեր Վազգէսը), որոնք 2 ցերեկ մնալով փառախում, հրաշքով ազատւած էին:

Քիւրդերից սպանւածները 40-50 են հաշուում, մի կողմ՝ թողնելով վիրաւորւածները: Սպանւածների մէջ կան դեր հազարապետ, միլիոններ և փոխ-խմբապետ, ու հարիւրապետ համրիլէի:



Կ Ի Ի Յ Յ Ե Տ Ո Յ

Մեր կորուստը մեծ եղաւ ոչ թէ բուն կուռում, այլ կուռից յետոյ: Հոկտ. 26-ի փշերը կորածներից Գաւթի, Փանոս II և Արսէն սպաստանում են Մամադ-Ալանայ քարում լուսաբացին քիւրդերը սրանց դըտնում են և կուռ բռնում 1 ժամի չափ: Յրտահար հայրուհիներին հազիւ յաջողում է 1 քիւրդ սպանել, 1 վիրաւորել: 3-ն էլ նահատակում են: Վիրաւոր Գարեգինը հազիւ իրան ձգում է Սարա, առաւօտեան սրան ևս գտնում են: Սարայի միրալայը

հրապարակում, զօրքի առաջ սպանալիքներով ստիպում է Գարեգինն ամեն բան խոստովանել, հայդուկը բացարձակապէս մերժում է: Զօրապետը հրամայում և հրացանները միանգամից պարպում են, Գարեգինը ընկնում է: Սարայում սպաստանած մի ուրիշ վիրաւոր ևս սպանում են նոյն օրը:

Փանոս III Սարայի կուռի դժշտում նոյն փշերը սանջում է: Երիտասարդ Մարտիրոսը Բօլաղ-Քեասանի կուռից յետոյ փուղը մնալով, նահատակում է: 7 հոգի մինչև հիմա անլուր կորուստ են: Մեր բոլոր կորուստը 20 հոգի է, 30 հրացանով և 18 ընկույթներով:

Կ Ո Տ Ո Ր Ա Շ Ն Ե Ր

Ա Ր Ա Ր Կ Ի Ր

II

Աւարառուներու խուժանը գոհ չեղաւ սակայն, այս ահագին ու ընդհանուր աւարառութեամբ և կողոպուտով: Անոնց երկրորդ գործը եղաւ այրել հայոց տուները: Գիւրավառ նիւթեր ու գործիքներ յանձնւած էին անոնց, որոցմով կողոպուտած ու դատարկացած տուները կրակ կը ձգէին ու կը հրդեհէին: Արաբկիրի շէնքերը առ հասարակ քարուկիր ըլլալուն համար շատ դժւարաւ կայրւէին. ուստի՝ մասնաւոր ջանքով կրակ ձգեցին տուներուն ներսի կողմը ու այրեցին բոլոր այն շէնքերը, որ ընդհանուր հրդեհէ մը այրելու կը յամառէին: Միանգամ բռնկեցած տուները երբ այլ և այլ պատճառներով այրելէ կը դադրէին, հրձիգները կրկին և կրկին կը հրդեհէին: Այսպէս մի քանի օրուան մէջ Արաբկիրի 2000 հայոց տուները այրեցան ու մոխիր դարձան: Տիւրք աւերակներու կոյտեր կը ներկայացնեն այսօր քաղաքին հայոց շէն ու դեղեցիկ թաղերը և անոնց մէջ Տէրպէտէրեանց, Քօլանձեանց, Եկանեանց և այլն և այլն, շքեղ ու բազմածախ ապարանքներն, ինչպէս նաև 1000-էն աւելի ընդարձակ բազմաթիւ ու խիստ փեղեցկայարմար բնակարաններ: Հրդեհը լափեց տարաւ նոյնպէս մեծ ու փոքր շուկաներն ամբողջ որոց կրպակներն մեծ մասամբ հայոց և մասնաւորապէս Մայր-Եկեղեցւոյ սեփականութիւնն էին և անոնց հետ երեք եկեղեցիներ, և վարժարաններ: Այն տուները միայն կանգուն մնացին, որոնք կառավարութեան դրան կամ թուրքաց թաղերու մօտ կը դըտնուէին և կամ որոնց մէջ թուրքերը կը նստէին, իբրև վարձակալ ու ասոնց թիւն ալ 150-300 է:

Սակայն աւարառութիւն ու հրդեհ միայն բաւական չէին Արաբկիրի հայութիւնը փչացնելու սոսկալի ու երկարատև կոտորածով մը հարկ էր, որ անոր դէմ արական սեռը բնաջինջ ըլլար. ուստի աւարառուաց բազմութիւնը կողոպտելու և հրդեհելու զբաղած ատեն միանգամայն կը զարնէր կը վիրաւորէր ու կը

սպանէր իրեն հանդիպած այր մարդը անխնայ: Զարդը տեղի կունենար ոչ միայն տուներու և փողոցներու մէջ, այլ պարտեզներու, ձորերու և ուրիշ անմտաչելի վայրերու մէջ, ուր փախած ապաւինած էր հայոց բազմութիւնը: Որովհետեւ մի քանի օրէն կարելի չեղաւ հայերը իրենց ապաստանած տուներէն ու թաքստոցներէն բոլորովին հանել ու կոտորել, հարկ եղաւ կոտորածը շարունակել մինչև տասն օր: Յատուկ ջանք մը կար սպանելու զփոնք, որոնք իրենց խելքով ու դրամով անուն ունէին քաղաքին մէջ: Շատ ընտանիքներու մէջ մէկէ աւելի այր մարդիկ կամ մի քանի եղբայրներ միասին զոհեցան մի քանի ազգատոհմերու մէջ այր մարդ բնաւ չմնաց: Տասն օր տևող այս ահաւելի կոտորածը բնաջինջ ըրաւ հայ ժողովրդեան գրեթէ արական սեռին մեծ մասը: Միջև ցարդ համարած զոհերու թիւն է 2300: Յակնա՛նէ յանձանէ կը յիշին Պարխցեան Տէր Ներսէս, Շամբեան երկու եղբայրներ՝ Տ. Մկրտիչ և Տ. Գեղամ, Տ. Գուրգէն և Գրիգոր վարդապետ Աբրահամեան:

Այս կոտորածը յաճախ քստմեցուցիչ՝ խժոժութեամբ կատարւած է: 50-ի չափ կիներ ու մանուկներ ընկած են չարագործներու սուրին ներքև ի շարս այր մարդոց: Քանի մը երևելի ազգայինները հարցումի համար կառավարութեան դուռը հրաւիրելով՝ հոն սպանւած են: Նալբանդ Ղազարեան հինգ եղբայրներ իրարու կապելէ վերջ գնդակահար եղած են: Արսէնեան անուն անձ մը մորթւած է իր եղբոր դիակին վրայ: Գրիգոր վարդապետի գլխատուած մարմինը ձորակի մը տիղմերուն մէջ շաղախեալ գտնւած է: Գտնւած է ընտանիք մը, որու 16 անդամները միասին սպանւած են: Այլերու, կազերու, համբերու ալ խնայած չեն: Շատեր ալ անդամատուած են:

Տուներու, փողոցներու, արտերու և ձորերու մէջ ընկող այս հազարաւոր դիակները օրերով անթաղ մնացած են, շատեր ալ գազանաց կերակուր եղած են. այս պատճառաւ կատաղութիւն եկած է շուններու վրայ, որոնք սկսած են խածնել զինւորներ ու թուրքեր: Կառավարութիւնը ստիպւած է բնաջինջ ընել զանոնք: Մեռնողները գերեզմանատուն փոխադրելու և թաղելու բաւական մարդ չգտնւելուն, իրենց ընկած տեղը թաղւած են, ոչ միայն ժամկոչներու, այլ հանդիպող մարդոց ու զինւորներու ձեռամբ:

Հազարաւոր վիրաւորեալներու համար չկայ ոչ հիւանդանոց, ոչ վիրաբոյժ և ոչ դարման:

Հրդեհին ժամանակ շատեր չկրնալով դուրս ելնել բոցերուն ճարակ եղած են ու իրենց տուներուն փրատակները իրենց գերեզմանները դարձեր են: Տեսնւեցան մի քանի կիներ ու օրիորդներ, որոնք իրենց ծնողաց մահը տեսնելով՝ իրենք ալ բոցերու մէջ նետուեցան: Շատ գեղանի կիներ ու օրիորդներ թիւրքերու ու զինւորներու կողմէ բռնաբարւեցան. ոմանք ալ առեւանգւելով բռնի կրօնափոխ եղան: Ոստիկանները ու կառավարութեան ներկայները երբ կողոպտւած, հըրկիզւած ու հալածւած բազմութիւնը հաւաքելով՝ իբր թէ պահպանելու համար կառավարութեան դուռը կը տանէին. հոն կիները, ծերերը ու մանուկները կը լեցնէին յարակից շէնքերու և տուներու մէջ, իսկ այր մարդոց կրօնափոխութիւն կառաջարկէին. ընդունողները ազատ կարձակէին, իսկ մերժողները կը բանտար-

կէին: Շատ այր մարդիկ պանազան նենգութիւններով, իրենց պահաւորած տեղերէն, նոյն իսկ իրենց կիներու և զաւակներու ձեռքէն կորզւելով՝ դուրս հանւած ու սպանւած են:

Հիմա 400-ի չափ բանտարկեալներ կան: Սովորական բանտերը անբաւական ըլլալուն, կառավարութեան յարակից մի քանի շէնքերը բանտի վերածւած են, այսու ամենայնիւ բանտարկելոց թիւն նայելով՝ շէնքերը այնքան անձուկ են, որ խեղճերը դիշեր ցերեկ ոտքի վրայ մնալու դատապարտւած են: Ասոնց վերապրւած յանցանքը այն է, որ կամ պարզապէս չափահաս այր մարդ ըլլալով՝ կոտորածէն ազատւած և կամ կրօնափոխութեան չեն հաւանած: Ասոնց մէջ վիրաւորեալներ ու հիւանդներ ալ կան, որոնք անինամ՝ ու անդարման կը տառապին: Զինւորների մէջ մեռնող թըշւառները կը վերցնեն ու դուրս կը նետեն: Առաջնորդական փոխանորդ Տ. Յուսիկ քահանան ալ բանտը նետւած է կառավարութեան կողմէ իրեն ներկայացւած թուղթ մը ստորագրել չուզելուն համար:

Սովորական բան է տեսնել ազնւահանութեամբ, բարեգործութիւններով նշանաւոր տիկիներու ու քաղաքացիների, որոնք դաշկադէմ ու կիսամերկ կը մուրան հրապարակներու մէջ կամ փուռերու առջև: Իսկ ուրիշ դասակարգէն մուրացող կանանց, էրիկ մարդոց, աղքեկներու և տղայոց թիւ ու համար չկայ:

Կոտորածէն ազնւաւոր հայոց բազմութիւնը, որ ըստ մեծի մասամբ կը բաղկանայ կիներէ, ծերերէ, մանուկներէ և վիրաւորներէ, գունդագունդ լեցւած են անվնաս մնացող հայոց տուներու, առաջնորդարանին ու երկու դպրոցներու մէջ. բոլորն ալ սովալուէկ, մերկ, անպատսպար ըլլալով, խիստ աղիւղորմ ու սրտածմլիկ վիճակ մը կը ներկայացնեն: Թէ ասոնք և թէ բանտարկեալները իրարու վրայ դիզւած դիակներու աւելի նմանութիւն ունին, քան թէ կենդանի էակներու:

Արաբկիրի շրջակայ գիւղերու մէջ ալ տեղի ունեցած են աւարառութիւն, հրդեհ, կոտորած և կրօնափոխութիւն: Մանրամասն տեղեկութիւններ կը պակսին դեռ, սակայն ստոյգ լուրերու նայելով՝ Շեփիկ գիւղը հրկիզւած է և ունի 60 զոհ, Վաղշէն՝ 35 զոհ, Բուշնա՝ 8 զոհ: Անջրդիի 120 տուն հայերը բռնի կրօնափոխ եղած, անուննին փոխած և մեծէն մինչև փոքրը թլփատւած են:

Խ Ի Չ Ա Ն

Սուլթան-Համիդը, հարէմի այդ պոռնիկը քարոզում է, հայ թիւրք ու եւրոպական լրագրների մէջ՝ թէ ինքը որարի ցանկութիւնն՝ ունի խաղաղեցնել Հայաստանի քաղաքները, թէ ինքը ամեն միջոց ձեռք առած է խաղաղութիւն, երջանկութիւն տարածելու Հայաստանի մէջ:

Այսպէս քարոզող խարդախը բացարձակ հրահանգ է տալիս ամեն վաղիներին, կողոպտել բոլոր դաւառնե-

բը ու միայն «Ղանին շատ զատ չընել», այսինքն չը-
 ձգտել մեծ կոտորած անելու: Հոկտ. 13-14-ին փչեց
 սև մահուան հովը և ամբողջ Վասպուրականի վրայ: բո-
 լոր քիւրդերը գուրս թափեցան՝ խրախուսելով սուլ-
 թանական ֆիրմանից: 13-ին գրեթէ յանկարծակի ա-
 լերեցան Արձէշ և Արծկէ գաւառները: 14-ին Խիզան:
 Խիզանի Կարասուի գայմագամ՝ Եշան բէգ հրահանգ ըս-
 տանալով, խորհրդակցում է զօրքի միլազիմ Ալի էֆէն-
 դու հետ և անմիջապէս լուր է տալիս Խիզանի շէյխին՝
 թէ «կեանքները կեանքն ու մալը ձեզ հայալ է,
 ձեզ տեսնեմ, ոչինչ չթողնէք, վեհ. սուլթանին ամրն
 այս է»: Իսկոյն կազմում են ահագին արշաւանքներ,
 որոնց ղեկավարներն են Խիզանու շէյխ՝ Սայիդ, Կառ-
 կաու աւազակ Մամէ, Ալիշէր աղա, Տարիբ աղա, Ադէ-
 բէգ, Հիւքիմազի կողմէն-Դուր Մահմուտ և այլն: Սրանք
 ահագին արշաւանքով թափուում են խեղճ, անգէն հայ
 գիւղերի վրայ, իսպառ կողոպտում են, ոչխար, տաւար,
 իւղ, ցորեն, մեղր, իրեղէններ, նոյն իսկ անկողին իսկ
 գինիները թափում են՝ ամանները կոտորելով: Խիզան
 գաւառում, Սպարկերտ և Կասկա գաւառակներում մօտ
 հարիւր հոգի սպանւած են:

Հոկտ. 10-ին Դաշնակցութեան երկու գործակատար-
 ներ ճանապարհ ընկան դէպի Խիզան. նրանք միմեան-
 ցից բաժանուում են ու սկսում է Դաշնակցութեան
 կազմ խմբերու դիմադրութիւնը:

Այս կողմերի 3/4 մասը վերջերս իսպառ աւերուում է:

1. Խիզանի Ս. Խաչի վանքը իր գիւղով ամբողջովին
 կողոպտւած է: Նահատակուում է Սահակ վարդապետը
 չարաչար տանջանքներով, նաև Տիգրան երիտասարդը:
 Ժամկոչի ձեռքը կտրուում են:

2. Տիւ, թալանւած, սպանւած են ուէս Պօղոս և ուրիշ
 գիւղացիներ:

3. Անպնար, թալանւած, Գարրիէլ սպանւած:

4. Պոռից, կողոպտւած, քահանան և ուրիշ գիւղա-
 ցիներ բռնի կրօնափոխ եղած են:

5. Նամ, կողոպտւած և մի երիտասարդ սպանւած:

6. Խնուս, կողոպտւած ու խիստ դիմադրութեան
 պատճառով Յակոբ և Վարդան սպանւած: Այս գիւղի
 բոլոր բնակիչները փախչում են, ձիւնապատ լեռները ա-
 պաւիններու:

7. Եզանց, ամբողջովին կողոպտւած:

8. Նորչէն, նոյնպէս:

9. Թահաւ, կողոպտւած, մի երեխայ վիրաւորւած:

1. Խարխա, թալանւած, սպանւած են ուէս Ծաղոս,
 որդին Պապօ, Մկրտիչ և Սասօ:

Ս Պ Ա Ր Կ Ե Ր Տ Գ Ա Ի Ա Ռ Ա Կ

11. Ճափան, կողոպտւած, սպանւած են երկու քահա-
 նայ, ուէս Սաթրօ և Չ1 երիտասարդ՝ խիստ դիմադրու-
 թեան պատճառով: Մէկ պատճառն ալ վանի Անգրի-
 ական հիւպատոս Հոլմարդին մի գիշեր դիւղը մնալն է:

12. Լիճառու, վառւած ամբողջովին, Ասօի աղջիկն
 ալ հետը:

13. Աւազար, կողոպտւած:

14. ԳիւՕսի, 1500 ոչխար տարւած և կողոպտւած:

15. Ներպան, կողոպտւած: քահանան փախել է
 քիւրդ Ասօի տունը:

Մեր գործակատարները, որ ժողովրդի հետ մի քանի
 գիւղերում դիմադրած էին, անվտանգ դարձան և

այսքանը հաղորդեցին. մնացած գիւղերուն ճիշտ տեղե-
 կագիրը պակասում է:

Կ Ա Ր Կ Ա Ռ Գ Ա Ի Ա Ռ Ա Կ

1. Եղէգիս, կողոպտւած, բրուտ Սարգիս և որդին ու
 եղբայրը սպանւած Խիզանի վրայ արշաւողներից:

2. Ծկոր վանքը և գիւղը, կողոպտւած, Սարգիս
 վարդապետ չարաչար նահատակւած:

3. Որիզ, կիսով շափ կողոպտւած, մահտեսի Մուրադ
 սպանւած:

4. Խորդից, կողոպտւած. դաշնակցական խմբի կող-
 մից մի գիշեր դիմադրութիւն է ընկուում:

Վերջին լուրեր (Խիզանից եկած Դաշնակցութեան
 անդամի հաղորդածը):

1. Ս. Խաչ վանքին մէջ 3 հոգի սպանւած:

2. Աւազարի մէջ Դաշնակց. գործիչ Շար. և նրա
 հետ 8 հոգի սպանւած:

3. Եղէգիսի մէջ ևս Պօղոս ու ուէս Պօղոս սպանւած:

4. Սարգիս վարդապետի հետ 14 հոգի սպանւած:

5. Խորդիցի մէջ Սարգիս իւր կնոջ հետ սպանւած:

ՕՏանէս և Կազար վիրաւորւած:

Ուրեմն աւելի քան հարիւր հոգի սպանւածներ կա-
 թելի է հաշւել մեր ստացած տեղեկագրի համեմատ:

ՆՆՐՐԱՏՆՈՒԹՈՒՆՆԵՐՈՒ ՅՈՒՑԱԿ
 Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական
 սնդուկի մէջ ստացւած են:

Արշալոյս 75 օսմ. ոսկի, Աշիւ Դիւբուա 50 օսմ.
 ոսկի, Կորով 50 օսմ. ոսկի, Արատաձեռն 50 օսմ. ոսկի,
 Գրիգոր 2. 20 օսմ. ոսկի, Բագրատունի 10 օսմ. ոսկի,
 Մոճեր Շաշոյեան 50 օսմ. ոսկի, Կարօ Պետրոյեան 10
 օսմ. ոսկի, Կարապետ Պ. 10 օսմ. ոսկի:

Հայկաւանի Դիւցազնուհուց 6793 Քրանկ.

Արշաւան գիւղից 85 օսմ. ոսկի, 238 քիլէ դարկ
 և 12 քիլէ ցորեն:

Տապար քաղ. կեդր. սնդ. մէջ ստացւած են.

Կայծակից 5 օսմ. ոսկի, Դաշնակցութեան 1 անգ. ոսկի:

Վեշապ քաղաքի Կեդր. սնդուկի մէջ ստացւած են.

Պատուհաս թ. 25 դհ., Արամեան թ. 35 դհ., Բար-

դուզիմ թ. 20 դհ., Հրազէն թ. 60 դհ., Օշին թ. 40

դհ., Արմենուհի թ. 100 դհ., Արվէթ թ. 85 դհ., Պա-

րոյր թ. 50 դհ., Հայրենասէր 10 դհ., Մուրադ 20

դհ., Ս. Հ. Գ. 40 դհ., Ալարիկ 5 դհ., Կիզիչ 5 դհ.,

Ապառաթէն Ա. թ. 146 դհ., Թ. Ծ. 112 դհ., Մ.

Մ. 20 դհ., 10 փարա, Գ. Ս. 5 դհ., Ա. Տ. Մ. 5 դհ.,

Յ. Ս. 10 դհ., Յ. Ա. 5 դհ., Պ. Կ. Ք. Փ. 5 դհ., Ար-

տաւազդով 16 դհ., Գ. Ծ. 20 դհ., Արտաւազդ թ. 62

դհ., 10 փարա, Կրակ թ. 30 դհ., Պապատա թ. 25

դհ., Հայկ թ. 20 դհ., Ողկոյզէն Արվէթ թ. 30 դհ.,

Ա. Մ. 20 դհ., Ա. Խուով 48 դհ., Օ. Գ. 20 դհ.,

Քանուն 26 դհ., Արվէթ 20 դհ.:

Դաշնակցութեան անմասնօրէնիս խնդրում է թղթագրութեան
 և նիւստութեան ամսագրի հետ:
 Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse).
 L. Boole, 40, Russell Road, Kensington, London W.
 Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան:

ԴՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Ա Ռ Ա Ջ Ն Ա Ռ Ն Ե Լ

Վոտորածի սարսափներից յետոյ, այժմ էլ մի այլ սարսափի՝ գաղթականութեան առջև ենք կանգնած. Հայ ժողովուրդը սկսել է գաղթել, թողնել իւր թըշուառ հայրենիքը և ուրիշ երկրքի տակ փնտռել մի քար՝ իւր խեղճ գլուխը դնելու համար:

Գաղթականութիւնը Տաճկահայաստանում քրօնիկական բնաւորութիւն է առել, որը հետեւանքն է երկրում տիրող պայմանների: Տասնեակ տարիներ է, որ Տաճկահայ ժողովուրդը հարիւրներով գաղթում, գնում է հեռու երկիրներ աշխատանք փնտռելու, իւր թշուառ գոյութիւնը պահպանելու համար: Մինչդեռ վերջին տարիներս այդ գաղթականութիւնը պանդխտութեան բնաւորութիւն ունէր, այսինքն գաղթողների մեծ մասը յետ դառնալու դիտումով էր թողնում հայրենիքը, այժմ նա փախչում է ահաբեկած, յուսահատած. իսկ գարնանը այդ գաղթելը աւելի մեծ շրջան կառնի, որ մեր ներկայ դատի, ազատութեան գործի համար վերին աստիճանի վշտացուցիչ է:

Ոչինչ և ոչ ոք չէ կարող այնպիսի ուժեղ հարած տալ տաճկահայ ժողովրդին, ինչպիսին կտայ գաղթականութիւնը. նա է, որ երկիրը կամայաջնէ, կը զրկէ իւր բնակիչներից և այնուհետև ի՛նչ կը մնայ անել... Հայկական դատը ինքն իրեն կը մեռնի, ինչ որ էլ սուլթանի կառավարութիւնն է ուզում: Հայ ժողովրդի ներկայ դատի ամենամեծ և վտանգաւոր թշնամին գաղթականութիւնն է. սա է, որ կարող է թաղել այն, ինչ որ չի կարող անել ոչ մի ուժեղ բռնակալ և թշնամին կը մնայ կենդանի ու ազատ... Թշնամին կենդանի մնալով, կը շարունակէ թագաւորել և միշտ դժոխային ծաղրի ու անարգանքի ենթարկել մեր մարտիրոսների յիշատակը...

Ի՛նչ կարող է այնքան սարսափելի լինել, քան այս, որ այսքան զոհերից, երկար տարիներ յամառութեամբ կռիւ մղելուց յետոյ, դարձեալ թշնամին կենդանի կը

մնայ, իսկ երկիրը կը զրկուի իւր զաւակներից, կամայանայ: Այս կը լինի հետեւանքը սկսած գաղթականութեան, եթէ նա կը շարունակուի, եթէ ոչնչով չի յաջողուի այդ հոսանքի առաջն առնելը: Բայց մի՞թէ այդ հնարաւոր չէ, մի՞թէ հնարաւոր չէ այդ մահացնող հոսանքի առաջն առնել, ազատել մեր ժողովուրդը ներկայ մեծ վտանգից:

Դրան հասնելու արմատական միջոցը այն է, որ պիտի փոխել երկրում տիրող իրերի ներկայ դրութիւնը ու այնպիսի պայմաններ ստեղծել, որոնք կապահովեն ժողովրդի կեանքը ու աշխատանքը, որտեղ նա կը զգայ՝ թէ ինքն է իւր տէրը և որ իւր ճակատագիրը կախած չէ մի պոռնիկ պարագիտից: Իսկ սրան հասնելու միջոցը յայտնի է—ապստամբական կռիւն, յեղափոխութիւնն է, որի անողը ինքը ժողովուրդն է իւր ինտելիգէնտ զաւակների աջակցութեամբ: Բայց երբ այդ ժողովուրդը փախչում է իւր հայրենիքից, նա ինքը իւր ձեռքով թաղում է իւր ազատութեան գործը ու զրկուում այլևս անկախ ապրելուց—նա ոչնչանում է:

Բայց մի՞թէ Հայ ժողովուրդը անտարբեր և սառը կը վերաբերուի այս նոր սարսափին, մի՞թէ նա թոյլ կը տայ, որ լէշակերը յաղթող հանդիսանայ, որ տաճկահայ ժողովուրդը ոչնչանայ: Ոչինչ չպիտի խնայել՝ ոչ բարոյական և ոչ էլ նիւթական ոյժ դրա առաջն առնելու, ամեն միջոց, ամեն զոհողութիւն պիտի յանձն առնել օգնութեան հասնելու, այլապէս ամեն ինչ կորած է...

Զուլա

ՉԷՑԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Չէյթունի անձնատուութիւնը պաշտօնապէս տեղի է ունեցել եւրոպական հիւղատոսների ներկայութեամբ. Ունիա կենտրոնացած ապստամբները վերադարձուած են իրենց բնակատեղերը:

Կ Ո Տ Ո Ր Ա Մ Ե Ն Ե Ր Ի Յ Յ Ե Տ Ո Յ

(Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Ի Յ)

I

30/11 յունւարի

Որքան սարսափելի էին կոտորածների առաջին օրերը՝ հոկտ. 18-ից մինչև 30-ը, այնքան տխուր և աղէտալի է այն տեսարանը, որը ներկայացնում է այժմն ամայացած Կարինը: Անցնում ես քաղաքի ընդարձակ վաճառանոցներից և ամեն տեղ պատահում ես անվերջ աւերմունքների, ուր երէկ գործում էին հայ աշխատասէր արհեստաւորը և ճարպիկ առևտրականը, նոյն այդ տեղերում այսօր տիրում է բացարձակ ամաշուկա: Գլխներին սպիտակ փաթաթած թիւրք դագաշներ (լթի դասակարգը) գազանացած զինուորների հետ միայն յաճախ անց ու դարձ են անում և ըստ երևոյթին անհուն գոհունակութեամբ դիտում իրենց կանգնած յաղթութեան կոթողները՝ մակազինների ջարդ ու փշուր եղած դռներն ու ապակեփեղկերը: Նրանցից ամեն մէկը սիրում է պարծենալ թէ ինչպէս մօրը գրկից խլեց երեխային և անցկացրեց սրի ծայրը, թէ ինչպէս մօտեցաւ հանդարտ իւր գործին նստած հայ արհեստաւորին և հրացանի մի գնդակով գետին տապալեց նրան, կամ ինչպէս անշունչ դիակներից յօշոտեց ժամերի ընթացքում և այլն և այլն: Իսկ թիւրք անմիտ ազգասէրներ, որոնք կազմում են և կառավարական ագահ պաշտօնէութիւնը, շարունակում են նստել սրճարաններում և ծխամորձը բերաններին, գրգռել մուսուլման ամբոխի ֆանատիկոսական զգացմունքները: Վերին աստիճանի ծիծաղելի են դրանց յայտնած կարծիքները Հայկական հարցի, կամ տէրութեանց դիպլոմատիքական յարաբերութիւնների մասին: Ժպտում են նրանք, ովքեր հաւատում են թէ բռնակալութիւնը կը յաղթանակէ երկար, թէ սուլթանի գահը յաւիտեան կը մնայ անկործան, եթէ Հայաստանի միջից հային վերացնելու դժոխային ծրագիրը ունենայ ապագայում այնպիսի հրաշալի հետեանքներ, որպիսին ունեցաւ ներկայ տարւայ վերջին քառորդում: Բայց հաստատապէս կարելի է ասել արիւն է գնում քիչ թէ շատ ինքն իրեն ճանաչող և թիւրքիայի ներկայ պայմանները ըմբռնելու ընդունակ թիւրքերի սրտից անշունչ է դրանց թիւր, հարիւրին 2-3 տոկոս հազիւ, բայց այդքանն էլ բաւական է ուրախութեամբ նշանակելու մի փաստ, որ Հայաստանում հենց իրենք թիւրքերը դժգոհ են սուլթանական ներկայ ընթացից և այդ անհեռատես և բարբարոս ընթացի իբրև հետեանք վերջերքս երկրում երևան եկած պայմաններից: Թողած մի կողմ հայ անվեհեր յեղափոխականի մղած անընդհատ կռիւր, թողած մի կողմ կառավարական կեդրոնում Եւլթըզի պալատի պատերի տակ հետըզհետէ սպառնալից կերպարանք ստացող ներքին պառակտումները և վերջապէս մի կողմ թողած դիպլոմատիայի տածած անվստահութիւնը դէպի թիւրքիան և նրա բերանում յորձորջող ընթացիները, թիւրքերի այդ սակաւաթիւ տարրը ստեղծումով նայում է ներկայի և ապագայի վրայ միանգամայն, նա տեսնում է թէ

ի՞նչպէս երկիրը դատարկւեց և շարունակոււմ է դատարկւել իւր կուլտուրական տարրից. նա իւր դժգոհութիւնը յայտնում է ամեն տեղ, ամեն հայի մօտ, բայց դժբախտաբար հեռի է վճռական քայլեր անելուց: Պարբերի ընթացքում—մտածում է նա իւր սեփական շահերի տեսակէտից—հայը գոյութեան կուսի մէջ շարունակ ձեռք է կառկառել Ալլահի որդկերանց՝ մուսուլմաններին. տէրութեան գանձարանը լցրել են հայերը, արհեստ և վաճառականութիւն ծաղկել են նրանց ձեռքում, երկրի քաղաքական ղեկավարները եղել են նրանք, առանց հայի մենք կեանք չունինք, մենք ինքներս կտրատեցինք մեզ կերակրող ձեռքերը և ինքներս յառաջացրինք այն սոսկալի ճգնաժամը, որի մէջ գտնուում է ներկայումս Օսմանեան մահաձեռք գահը: Վաղ թէ ուշ իւրաքանչիւրը կստանայ իւրը, ասում են նրանք, հայը տէր կը դառնայ իւր իրաւանց և մեզ կը մնայ միայն ողբալ, որ ժամանակի ոգին ըմբռնելու ընդունակութիւն չունեցանք և սեփական ձեռքերով պատրաստեցինք մեր գերեզմանը: Այս գիտակցութեան հարկաւոր է վերագրել և այն հանգամանքը, որ կոտորածների ժամանակ թիւրքերից ոմանք ջերմ պաշտպանութիւն ցոյց տւին հայերին: Սխալ է թէև նրանց լօգիկան, բայց ակներև փաստ է, որ Կարինում թիւրքը առանց հայի ոչինչ է. նա կեանք չունի: Հայն էր այստեղ վաճառականը, թիւրքաց խոշոր կապիտալները շահագործողը, երկրագործը, հայն էր արհեստաւորը և վերջապէս հային յատուկ էին այն բոլոր պարապմունքները, որոնք աշխատանք և խելք են պահանջում: Բացի մագործներից և պողպատաձուլներից—այնպիսի ըզբաղմունքներ, որոնք բարբարոսական վարմունքով պայմանաւորուում են թիւրքիայում—դուն ուրեք գտնուում են Կարինում տարբեր գործի տէր մարդիկ: Երևակայեցէք կօշկակարների, դերձակների, ոսկերիչների և ժամագործների անխտիր և ամբողջովին թալանելու պատճառով մինչև նախընթաց օրը (երկու ամիս յետոյ կոտորածից) կօշկի, ժամացոյցի, կամ զգեստի պէտք ունեցողը մնում էր շարած. որտեղից հայթայթել թիւրք դերձակ, կօշկակար, ժամագործ և կամ՝ ոսկերիչ Ասուած տայ Կարինում: Անկասկած գազանային կրքերի առաջին բողբոջները անցնելուց յետոյ՝ կառավարութիւնը զգաց իւր ծանր սխալը, և քաղաքը իւր աւերակների վրայ նորից վերականգնելու ձգտումով այժմ ամեն կերպ աշխատում է համոզել հայերին, որ մոռանան անցեալը, մի կերպ դրստեն իրենց և հանգիստ սրտով գործի ձեռնարկեն. ոստիկանութեան պաշտօնեաներ անամօթաբար ընկնում են տնէ տուն և հրաւիրում հայերին բաց անել խանութները, յայտարարելով միանգամայն, որ այս հրաւերին անհամապատասխան անձինք կը նկատուին խռովարարներ (թիւրքաց կառավարութեան բառը յեղափոխականների համար) և կենթարկւեն օրէնքի բռնու խստութեան: Ամեն բանից զրկւած, ամենահասարակ մի գործիք կամ քիչ թէ շատ գործելու նիւթ, չունեցող արհեստաւորին ստիպում են բռնի բաց անել խանութ, նստել և դիտել դագարկ անկիւնները. իսկ այդ բոլորը նրա համար, որ քաղաքը նորից ստանայ իւր կենդանութիւնը և բարբարոսութեան անհետ նշաններ իւրաքանչիւր բողբոջ աչքի չընկնեն, պատճառելով իրենց խորը խղճի խայթ, իսկ օտարներին զայրոյթ և զզւանք միանգամայն...

II

Մէկը միւսի ետեւից սիստէմատիքաբար կատարուող կոտորածները անկասկած թողին և մի որոշ ազդեցութիւն հայ ժողովրդի վրայ, որը Թիւրքիայի բոլոր մասերում աննշան բացառութեամբ զոհ դարձաւ վայրագ սուլթանի անյագ վրէժխնդրութեան:

Կոտորածին յաջորդող առաջին օրերում, յոյսը մի առանձին սիտիւմէնք էր տալիս հալածւածներին. ամեն ոք հաւատում էր, որ արեան յորգահոս գետեր վերջապէս կառաջնորդեն հային դէպի ցանկալի վերածնութիւն և կը բանան նոր կեանքի մի այնպիսի շրջան, որի մէջ կարելի կը լինի մոռանալ անցեալի տխուր և սոսկալի յիշատակները, բայց այդ յոյսը մնալով յոյս, և ըստ երեւոյթին առ այժմ հեռի իրականութիւնից, Կարնոյ հայ հասարակութիւնը ընկղմել է ծայրայեղ յուսահատութեան մէջ... Նա նայում է շուրջը և գըւնում, որ այլևս անտանելի է ապրել մի այնպիսի կեանքում, որի մէջ ամեն մի րոպէ մարդկանց կեանքը կարող է կախաւծ լինել յիմար քմահաճոյքներից. հաշուել այդ կեանքի հետ և հետեւել Աստուծոյ կամեցածին—ինչպէս մտածում են ոմանք—դա միանգամայն անհնարին է. անսովոր սուլթանի վայրագ կառավարութեան և նրա հայ հպատակների մէջ իրերի բնական ընթացքով բացւել է մի այնպիսի անջրպետ, որը ոչ մի կերպով վերանալ չի կարող. խաղաղութիւն և անդորրութիւն—սուլթանի սիրած բառերը—ոչ մի կերպով չեն կարող տիրել այս երկրում, մինչև լիակատար բաւարարութիւն չտրւի հայ ժողովրդի կեանքի ծընունդ. Հայկական Յեղափոխութեան արդար պահանջներին: Հանդիստ նստել, բայց ի՞նչ սրտով, միթէ մի րոպէ հեռանում են նրա՝ ժողովրդի աչքերից բերաւոր նահատակների արիւնաներկ պատկերները. միթէ կարելի՞ է մոռանալ ընկնող քոյրերի և եղբայրների վերջին սրբազան կտակները: Եւ իրերի այս դրութեան մէջ՝ կրիտիքական է արդարև ժողովրդի վիճակը. երկու սրի մէջ է կանգնել նա, կատարի ծովի անսանձ ալիքներին մատնւած խեղճողի պէս նա իւր ձեռքերը դցում է պատահող իւրաքանչիւր կոհակին՝ փրկութիւն գտնելու յուսով: Նրա գլխում ակամայ ծագել է մտք—ինչպէս ցոյց են տալիս փաստերը—յառաջիկայ դարնան գաղթել դէս ու դէն և հայրենի տունը ու օջախը թողել միանգամ ընդ միշտ աւերակների տակ: Սուլթանի կառավարութիւնն էլ միթէ չի ձրգտում դրան, բայց արդէն այնքան անողոր է, որ արիւնարբու գազանների պէս կամենում է որսը հենց իւր ձանկերում խեղդել. և մենք հաւատացած ենք, ամեն կերպ արգելք կը հանդիսանայ եթէ հարեան պետութիւնների հետ չը կազմի այս աւիթով մասնաւոր դաշըն: Առ այժմ՝ իրը և առաջին փորձ, Կարնից է սկսւել դաղթականական հոսանքը. ընդհանրապէս թողնում են քաղաքը երիտասարդ տղամարդիկ, որոնք աւելի ենթակայ են կառավարական հալածանքների, իբրև ջանձեղապիներ (անձուրաց). համարեա իւրաքանչիւր օր թիւրք առաջնորդներով անցնում են սահմանը տասնեակ հոգի. դրանց թիւը ցարդ հասնում է միմիայն Կարնից 230-ի: Շատերը գաղթել ուզում են ընտանիքով՝ եթէ թոյլ տայ կառավարութիւնը և եթէ հիւրընկալող մէկը լինի. այնուամենայնիւ գնալով

աճում է ժողովրդի մէջ այն մարդկանց թիւը, որոնք ծանօթ լինելով գաղթականական կորստաբեր հետեւանքներին, լաւագոյն են համարում Ցաճկահայաստանը դարձնել իրենց գերեզման, քան անձրեւից փախչելով կարկտի պատահել. յեղափոխական տարրն է այդ և նրան վառում է վրիժու խոր զգացմունքը...

Երևան

Կ Ո Տ Ո Ր Ա Տ Ն Ե Ր

Ս Պ Ա Ր Կ Ե Ր Տ Ե Ի Խ Ի Զ Ա Ն

Այս տեղեկագիրն ամփոփում է իւր մէջ նաև նախկին կոտորածն ու աւարը, որովհետև անհնար էր միմեանցից զատել:

Գաշնակցութեան մազապուրծ փախած երկու սուրհանդակ ահա ինչ տեղեկութիւն են բերում, որոնք ահանառես են եղած սարսափելի կոտորածներին.—

«Կառավարութիւնից հրահանգ առնելով քիւրդերը զօրաժողով արին հետեւեալ տեղերից—նեհիասօտկանցի, էրնցի, շիրվանցի, ոստանկցի, Բօհտանի մեծ մասը, Խիզանի և Սպարկերտի բոլոր քրդերը: Այս ցեղերի թիւը հասնում է մօտ 3000-ի, որոնք ահագին հեղեղով թափւում են այդ գաւառների վրայ և բոլորովին օտնակոխ անում, կոտորում անգէն ժողովրդին, իսկ մնացածը բռնի կրօնափոխ անում: Քրդերը ջոկում են հարկւրներով գեղեցիկ հարսներ, աղջիկներ ու քըշում դէպի իրենց գաւառները: Գայմազամների հրամանով քիւրդերը բոլոր հայ գիւղերում թըքական դրօշակներ են տնկում ի նշան մուսուլմանութեան: Բռնութեան տակ, մուլաների հրամանով հայը սպանում է իւր եղբորը կամ հօրեղբորը և կնութեան վերցնում եղբոր կինը կամ հօրեղբոր աղջիկը. այս բաւական չէ, մուլաները հրամայում են դրանց հրապարակի վրայ, իրանց աչքի առաջ արիւնակից ազգականներին զուգաւորել, որով յայտնի լինի յհայի դնի գալը»: Սպարկերտի ճաճուան գիւղի Խաջօի ջահիլ և գեղեցիկ հարսը առեւանգում և ամենքի աչքի առաջ տանում մօտակայ Բազէնց գիւղը: Սուրհանդակ Մանուկը մի քանի երիտասարդների որոշմամբ հետևում է գաղտնի ետ փախցնելու թշուառին: Նրան յաջողում է մտնել այն հայ տունը, ուր հարսն է, չանցած մի քանի րոպէ, քիւրդ խուժանը մերկացրած սրերով ու հրացանների որոտումով թափւում են այդ գիւղը և ինչպէս ամեն գիւղ ու հայ տղան, նոյնպէս և այդ հայ տունը հաց, պաշար, տաւար, ոչխար, ամեն, ամեն բան կողպտում են, գեղեցիկները ջոկում, մնացածներին, որոնք չեն յաջողած փախչել, կոտորում: Մանուկին յաջողւում է սրբորդել քիւրդերի մէջ: Յաղթութեան դրօշակը գիւղի մէջ տնկելէն վերջ, մուլաները կրկնում են թիւրք գայմազամի հրահանգը: Պէ՛ մի տեղ 15 տարեկանից վար չկոտորէք, իսկ հասակաւորներին նախ պէտք է տաճկացնել ապա սպանել ինչպէս հրաման է, որպէս զի որդիքը իրենց հօր տաճկական գերեզմանը տեսնելով, չյիշեն այլևս մուսուլման հայութիւնը»:

Մանուկը սարսափելով լսածից, դուրս է պրծնում այդտեղից և սաստիկ ցրտին, մէկ արշին ձիւն ճղելով լուր է ձգում մտակայ գիւղերը: Սպարկերտցիք ոմանք խոյս տալով՝ ձեան, բքի տակ սառչում են, ոմանք մի կերպ պահւում են. իսկ մնացածները ենթարկւում անպատեւելի կոտորածի: Խոյս աւածները 70 հոգի հետեւում են Գաշնակցութեան սուրհանդակներին Շ-ին և Մ-ին, լեռներով անցնում են Մոկս և ապա Ռշտունիք: Սուրհանդակներին յաջողում է փախչել Վան, իսկ 70 հոգին արգելում են կառավարութեան կողմից Ռշտունիքում, որ չլինի թէ կոտորածի լուրերը տարածւին: Խիզանի քիւրդերը բանը հասկանալով լուր են տալիս Բիթլիզի վալիին, որն անմիջապէս հեռագրով Վանի վալիից պահանջում է այդ երկու սուրհանդակներին, այն պատրուկով, որ իբր թէ տեղեակ մարդիկ, նրանցից ուզում է խիզանի և Սպարկերտի հարստահարութիւնները տեղեկանալ: Վանի վալին դիմեց տեղիս առաջնորդին և այդ երկուսին պահանջեց, վերջինս մերժեց, մանաւանդ որ սուրհանդակները ոչ մի կերպ համաձայն չեն գնալ և զգոյշ պահւում են:

Հայաստանի խորքերում, ուր չկայ հիւպատոս, մեծ քաղաքներ, ահա թէ ինչքե՞ր է կատարում լէշակեր սուլթանը:

Խիզանի և Սպարկերտի համառօտ ցուցակը.

Ս Պ Ա Ր Կ Ե Ր Տ

1. Վերի-Հիւրուկ	30	տուն	18	սպանւած.
2. Ծղանտ	13	"	12	"
3. Սև-Քար	13	"	15	"
4. Ճաճուան	40	"	25	"
5. Վերին-Կօտենց	30	"	13	"
6. Ներքին-Կօտենց	10	"	7	"
7. Ներքան	8	"	5	"
8. Բաղենց և վանքը	21	"	10	"
9. Լուսու	15	"	8	"
10. Թաղ	15	"	4	"
11. Յեղիս	10	"	8	"
12. Տանձիս	10	"	4	"
13. Տուսու	25	"	9	"
14. Գալարս	20	"	5	"
15. Յարգեն	5	"	4	"
16. Գաշա	8	"	7	"
17. Մատ	10	"	13	"
18. Մատածմէն	20	"	6	"
19. Շիրնից վանք	20	"	4	"
20. Տուաղուս	20	"	11	"
21. Կուան	5	"	3	"
22. Սոտգանց	20	"	13	"
23. Առնջիկ	20	"	11	"
24. Ներքին-Հիւրուկ	20	"	7	"
25. Պետրոսանց	10	"	8	"
26. Հայհուսպ	15	"	7	"
27. Խայիդ	15	"	6	"
28. Բաստ	60	"	51	"
29. Սորիկ	25	"	8	"
30. Բերտակ	10	"	6	"
31. 3 Սորա, վանք	10	"	3	"
Յրտամահ և սովամահ			14	"

Խ Ի Ջ Ա Ն

1. Տարոնց գիւղ	30	տուն	4	սպանւած.
2. Ներքին-Տարոնց	30	"	5	"
3. Վերին-Վարասու	30	մեծ մասը	սպանւել է	
4. Շէն	40	"	6	"
5. Խստետ	40	"	"	"
6. Խուփ	10	"	4	"
7. Փալասար	10	"	3	"
8. Եկու	20	"	8	"
9. Անտենց	20	"	10	"
10. Տի	60	"	11	"
11. Նորշէն	20	"	15	"
12. Եղունձ	10	"	3	"
13. Պրօշենց	20	1 քահանայ	մորթւած	
14. Փարս	10	"	2	"
15. Մամրեօն	20	"	1	"
16. Կասր	10	"	2	"
17. Խակև	40	"	6	"
18. Խարխոձ	50	"	2	"
19. Նամ	10	"	4	"
20. Խածուս	10	"	3	"
21. Կատրնակ	10	"	3	"
22. Պախուր	10	"	2	"
23. Լի	10	ամբողջը վառ.	սպանւած.	
24. Հիւրձուկ	5	"	1	"

96

**

Այս երկու փոքրիկ դաւառակի մէջ 400 հոգուց աւելի կոտորւած է և դեռ շարունակւում է: Ոմանք պընդում են, թէ կոտորածը աւելի սարսափելի է:

Տ Ի Վ Ր Ի Կ

Այսօր ամիս մ'է, որ հայրենիք ժամանած եմ. երբէք հանգստութիւն չունիմ. ահ ու դողի մէջ ենք, Գուրուչայէն մինչև Հասան-Օվա քարաքանդ եղած են: Մեծ Արմանէն 17 հոգի կոտորւած են, որոնց մէջ է Տ. Գրիգորիս երիտասարդ քահանան. Տէր Կարպետ ծանրապէս վիրաւորւած է, իսկ Տէր Յակոբ ծերունազարդ քահանան կսպւած՝ գիւղէ գիւղ կը պտտցունեն: Արմաններու մէջ թալանը յետին ծայր հասած է, տուներու մէջ մինչև ջուրի դաւաթ անգամ կոտորած են: Կ ա ս մ ա, Ջ մ ա ո ա, Հ ա յ թ ու ղ ա տ պր և կին գրեթէ մերկ և սովալլուկ կը տուայտեն: Բինկեան թէև քաջաբար դիմադրած է, բայց քիւրդեր դարձեալ յաջողած են ներս մտնել, կոտորել թալանել և հրդեհել: Կամա ալիւրը, թխած հացն անգամ տարած են: Քաղաքիս հարաւային կողմը Բարդամի, Արմաշոն և Օտուռի տաւարները յափշտակւած են: Աշուշէն և Վիւրէսու ահ ու դողի մէջ են, ինչպէս նաև քաղաքս, ուր ոչ քուն կայ և ոչ հանգստութիւն, ուր կոտորածին կսպասւի ժամէ ժամ: Այսչափ վտանգալից վայրկենի մը մէջ դեռ չենք սթափած, պիտի մեռնինք՝ ստոյգ գիտակցութիւնը ունինք և դեռ

քաղաքար մեռնելու ազնիւ զգացումը ոչ զքիս սիրտը կը բորբոքէ. վայ մեզի, այսպէս մեռնելու ամօթ կըզգամ...

Տերսիմէն Տարիւրի չափ օվածըդցի քիւրդեր Տիվրիկի շրջակայ թիւրքերու հետ վոհմակ կազմած, սովալլուկ դայլի նման ցրած են ամեն կողմ և կը յայտարարեն բացարձակ, թէ «Մեր ձեռքը բարձրագոյն հրաման կայ հայերը կոտորելու և գիւղերը, քաղաքը աւերելու»: Խաղաղ տաճիկներու տուններու վրայ ձերմակ դրօշակ քաշել կուտան, որ հայերէն զատուին, ինչպէս Արմտան, Կասմա ըրած են: Հարաւային կողմէն Տուրքանլը աշիրէթները երեւան եկած են, որոնք աւերումով զբաղած են միայն այժմ. և որոնք կըսեն՝ «Հայեր, բարձրագոյն հրաման ունինք, ձեզի պիտի ջարդենք, չի պիտի թողունք, որ ձեր ի սլահա թիւր վայելէք»: Անգոր և անօգուտ կըլլան վայլին և Պետրոս եպիսկոպոսին ուղղած հեռագիրներն: Առաջնորդարանը անխնայ կերպով կաշխատի կոտորածին առջևն աննելու: Պալատը Ա. քարտուղարին հեռագիր քաշեցաւ, բայց Սեբաստիայէն արգելեցաւ և վային հոս հեռագրեց՝ թէ «Պալատը հեռագիր քաշելով կը յուսաք, թէ պիտի յաջողէք, սպասել պէտք է»: Ամբողջ գաւառին մէջ հազիւ հարիւր զինուոր կայ պաշտպանութեան համար: Գայմագամը կերակի թէ լուրջ կաշխատի, Խոնավէրի պաշտպանութեան ատեն 4 հատ գոգկերցի նշանաւոր աւազակներ բռնեց, Սառոյնիքէն Փիհզանը, գէրնեցի Բէլէնը և Բէօր Սըլչի տղան Մամեդը: Վերջիններս բացարձակ կը խոստովանին, թէ «Մենք բարձր հրամանաւ ոտքի ելած ենք»: Աշխատեցէք հոդ կոտորածի առջևն առնելու, եթէ յաջողէք աղէկ, եթէ ոչ, ոչխարի պէս պիտի մորթուիք: Երանի թէ մեր արիւնը թշուառ Հայաստանի ազատութեան գինն ըլլար... Նայեմ. 3-ը ահաւելի, սարսափելի օր մ'եղաւ Տիվրիկի համար: Գեռ ահանջս կը բզզայ հրացաններու և ատրձանակներու ձայնէն, դաշոյններու և կացիններու մէջէն ազատեցայ հրաշքով: Առաւօտուն արշալոյսին հետ քիւրդ, թիւրք, Ալիական ցեղն՝ սուր, հրացան ի ձեռին յարձակում գործեցին: Նախ թաղանի սկսան մինչև կէս օր, ապա սկսան կոտորածը: Ոչ երիտասարդի, ոչ ծերի խնայեցին, հանդիպողի մահը անխուսափելի էր: Ամեն քայլափոխիդ դիակ, վերաւորներու աղէկուոր հառաչանքը, այրած տունների փախչող կիներու, մանուկներու վայնասունը սիրտ կը ծակէ: Աչքովս տեսայ կիներ, որ կը բռնաբարէին: Վին մը արիւրաբար կը մաքառի խումբ մը գազանաբարոյ քիւրդերու դէմ և ահա մի քանի գնդակներով դիտապաստ կիյնայ՝ դէթիւր պատիւը ազատած: Նկարագրել ինչ որ պատահեցաւ, ինչ որ տեսայ, անկարելի է: Հրդեհը լափեց տուները և այսօր մոխրակոյտերու վրայ նստած կողբանք մեր սիրելի նահատակները, որոնց թիւը երկու հարիւրի կը հասնի: Հարիւր տուն այրած և տասը ընտանիք բռնի կրօնափոխ եղած են: Օրը 3-4 մարդ վախէ, աթոռութեան կը մեռնին: Տիվրիկի փչացաւ, ոչնչացաւ: Շրջակայ գիւղերն ալ մեր վիճակին հասած են՝ մերկ, անօթի և անօթեան, հարուստ և աղքատ հաւասար ենք, լաւ գիտեցէք...

Ահա թէ ինչ կըսէ իմ բարեկամներէն մին. — «Երկու զաւակ ունիմ, որ հաց, հաց գոչելով կուլան, չկըրցաւ դիմանալ սիրտս, արտասուալից՝ թիւրքի մը դիմե-

ցի ողորմութիւն խնդրելու, ո՛հ, որքան դժւար է եղեր մուրալը. հազար երանի անոնց, որ նահատակեցան... Թիւրքը ապտակ մը երեսիս զարկաւ ըսելով՝ «տէֆօլ, խընզըր կեսավուր. պէսլիկ այդընըզ, գարնընըզ տոյմատը մը»: (կորուէ՛, անհաւատ, պէտութիւն առիք, գեռ փորերնիդ չը կշտացա՛ւ): Երեւակայեցէք յուսահատութիւնս, պահ մը խորհելէ վերջ՝ որոշեցի անձնասպան ըլլալ և չտեսնել զաւակներուս թշուառութիւնը. սակայն վրէժխնդրութեան գաղափարը ետ կեցուց ինձ: Օգնեցէ՛ք, սիրելի եղբայր»:

Երեք թիւ ձիւնը եկաւ ծածկեց, ի՛նչ պիտի ըլլանք: Բաւական թուով զօրք եկաւ, սակայն պաշտպանելու բան չէ մնացեր, աւերակներու վրայ, պիտի թագաւորեն: Առաջնորդարանը այրեցին, եկեղեցին սրբապղծեցին և քանդեցին, քահանային մէկը սպանեցին՝ իսլամութիւն չընդունելուն, բողոքականներու ժողովարանը այրեցին և պատուելի Պետրոսը խողոտեցին: Տեղոյն կառավարութիւնը ամենքս օր մը դարանին մէջ պահեց և անուններս արձանագրեց, թերեւս ապագային ստեղծ համար, թէ «Մենք պաշտպանեցինք հայերը»: Օգնութեան հասէք, վիճակներս շատ թշուառ է, սովամահ կը կորնչինք, ալ բողոքովին կարողութիւննիս հատաւ: Օգնութիւն, որ ապրինք. եթէ մեռնինք, լուծեցէ՛ք մեր վրէժը:

Հատուած մը... գիւղացիի մը նամակէն.—

Վայրենի քիւրդ և չաչայ պաշարեցին գիւղերնիս: Տուններու բոլոր կահարասիները, անասունները թողլով, չոճուկներս հազիւ կրցանք փախցունել լեռները, ուր երեք օր մնացինք անօթի և խեղձ: Նայեցանք որ ձար չկայ, դնացինք 25 օր Գուռան կեցանք՝ անօթի, առանց անկողնի: Վերջապէս 25 օրէն վերադարձանք գիւղ, ուր ամեն բան կողոպտեր տարեր են. տուններնիս ալ վառեր են այն աստիճան, որ տունին տեղն անգամ յայտնի չէ: Եկածը ձմեռ է, չոր խսիր մը անգամ չկայ, որ վրան նստենք: Անօթի ենք. չոճուկներն կուլան, կողբան, հաց կուզեն, չկայ. սրտերնիս չի դիմանար, կերթանք քուրդերէն կը մուրալք, քիչ մը թեփ կը թօփենք, լափայ կընենք, անջուր չուտելի, չոճուկներն խենթի պէս կը թափուեն լափայի վրայ՝ քիչ մը կուտեն, կնային որ չուտելի, կսկսին լալ: Քարի պէս սիրտ պէտք է, որ դիմանայ: Ի՛նչ ընենք, ո՛ր երթանք, չենք գիտեր. ոչ ցորեն մնաց, ոչ տաւարնիս մնաց, թրուչուններն անգամ գիւղերէս հեռացան: Յերեկն անգամ գիւղին մէջ չենք կրնար պատիլ: Ի սէր. Աստուծոյ մեզի հացի գին մը ղոկեցէք, որ ուտենք, չը մեռնինք. նայե՛ք Աստուած ինչ կընէ, այս թշուառ վիճակնիս ո՛ր պիտի հասնի. պաղչաններու չափարներուն տակ ալ կանաչ խոտ չմնաց, ալ փախչելու ձար չը մնաց»:

Մի ուրիշը Հապապ գիւղէն կը գրէ.—

«5000 հոգի վայրենի քիւրդեր և չաչայ շրջապատեցին գիւղին բոլորափըը, երկու օր երկու գիշեր պատերազմեցան, բայց տեղէ մը օգնութիւն չըլլալուն համար՝ կոխեցին գիւղը և սկսան սուր խաղցունել, ոչ ծեր զատեցին և ոչ երիտասարդ, ոչ մանուկ, ոչ կին և ոչ աղքիկ. ոմանք գիւղին, ոմանք պարտեղներուն, ուրիշներն այգիներու և հնձաններու մէջ ոչխարի պէս մորթեցան, ողբերն ու աղաղակները հրեշտակներն վար թափելու աստիճան սրտաձմիկ էին: Տուններն կողոպտեցան և հրդեհ արակ եղան: Ասոնց ամեն ըրած խայ-

տառակութիւնները և անգթութիւնները հոս պատմելու գրիչս չի դիմանար... Կոտորածի թիւը անյայտ է, շատերն տուներու մէջ պրած են”:

Այլ և այլ գիւղերու մէջ եղած կոտորածներու և վիրաւորներու թիւը կը գրեմ, որոնց ամենքին անունները յայտնի են:

Աշուշէնէն 15 մեռած, որոնցմէ Յովհաննէս Բարաղամեան կրակով այրած և Նունուֆար Փիլիկեան 20 տարեկան օրիորդ մը մորթած է. իսկ վիրաւորներու թիւը կը հասնի 25-ի, որոնց մէջ 8 տարեկան տղայ մը ու կին մը կայ: 80 տունէն 30-ը բոլորովին հրոյ ճարակ եղան:

Արմթաղէն 30 սպանւած և նոյն չափ ալ վիրաւոր: Այս գիւղը, որ բոլորովին հայաբնակ է, 70 տունէ բաղկացեալ է, որոնց 50-ը բոլորովին այրւած են:

Օդուռ հայաբնակ գիւղէն 12 սպանւած և գրեթէ նոյնչափ ալ վիրաւոր: 70 տունէն 20-ը կրակի ճարակ եղած:

Կիւրէսին, որ 30 տուն թիւրք և 30 տուն հայէ բաղկացած է, ունի 10 մեռեալ և 3 վիրաւոր: Տունները այրւած չեն:

Բարդամ, որ 20 տունէ բաղկացած է և բարձր լեռան մը վրայ շինւած, բոլորովին կրակի ճարակ եղած է: Առայժմ 2 սպանութեան լուր կայ:

Երկար կըլլայ հոս նկարագրել այս գիւղերու վիճակը, որ այնչափ սրտաձմիկ են: Ամենքն ալ այժմ հաց կաղաղակեն, սոյլը և ձմեռը ահաբեկ կը դիտեն: Ամենքին սրտին մէջ վրէժխնդրութեան բոցը կարծարծի: Արէժ կը գոչեն անոնք, որ կորուստ մը ունին, վրէժ կը գոչեն անոնք, որ մարդասիրութեան և հայրենասիրութեան ազնիւ խանդով բորբոքած՝ նւիրած են իրենց անձը մարդկային թշուառութեան բարձման և որոնք յեղափոխութիւնն իրենց միջոց ընտրած՝ կուրծքերնին սուրի և գնդակի տւած՝ անվհճեր կը յառաջանան դէպի ազատութեան սուրբ գործը: Արէժ գոռանք և մենք, ընկերներ, թող ամօթ ըլլայ մեզ լսել և տեսնել մեր եղբայրներու աղետարար կորուստը և անտարբեր մնալ: Թող մէն մի կոտորած բազմապատկէ մեր ոյժերը և մեզ քէ արեան դաշտը, ուր մեր հայրերու, եղբայրներու, քոյրերու դիակները իրար վրայ կուտակուած են: Չը յուսահատինք երբէք, բռնաւորը պիտի իյնայ և անոր դիակին վրայ մենք ազատութեան դրօշակը պիտի պարզենք:

Ա Ղ Ը Ն Ի Ե Ի Շ Ր Չ Ա Կ Ա Յ Ի

Պատուհասներէն մէկ ամիս առաջ, Մէվլուտ անուն յիսնապետ մը երկու տասնեակ ոստիկաններով ջոկւած էր՝ մեր վիճակին հայերուն կեանքն ու գոյքը պաշտպանելու՝ քիւրդերու հարստահարութեանց դէմ: Բայց շատ ուշ իմացուեցաւ, թէ անիկա թաքուն նպատակով հայերու վիճակն ու շարժումները լրտեսելու պաշտօն ունի եղեր. զի երբ մօտակայ գիւղերու կողոպուտիլը իմացաւ, փութով հեռացաւ:

Յարձակումները սկսան հոկտ. 15-ին: Չմշկածագի հայ գիւղերը թալանելէ ետք՝ խուճը մը քիւրդեր Եփրատէն ասդին անցնելով՝ միացան սարածըզցիներու պետ Մուհամմէդին: Ամեն հասակի ու աստիճանի մարդիկ միանալով անոնց՝ քանակ մը կազմեցին հայ գիւղերու վրայ արշաւելու համար, յարձրագոյն հրաման է՝ ըսելով:—Առաջին զոհերը Աշնի մօտակայ Անք գիւղի հայերն եղան, որոնց բոլոր տնական կահ կարասիները, զգեստ, ուտելիք՝ կողոպուեցան. տուներնին հըրդեհելով՝ քանի մը անձեր զոհ տւին: Երկրորդ զոհերը Աղնի հայերը եղան, Անքի հայերին բոլորովին բախտակից: Մոլեռանդ խուճանը հոս չբաւականացաւ ստացածքի կողոպուաներով. 40 մարդ ալ սպանեցաւ:

Հոկտ. 21-ին յարձակեցան Աաղէնի վրայ, որու բնակիչները շատ դոհ պիտի ըլլային՝ եթէ միայն կողոպուելով ազատէին: Իսմայիլ էֆենտի անուն մէկը՝ միտքը դրած ըլլալով իւրացնել հայերու իր մօտ ի պահ դրած ստակն և ինչքերը, ձամբայ կը հանէ գիւղին տղամարդերը Աղնի դիկելու համար: Ձամբան կը հանդիպին վայրենիներու խուճին, հայ երիտասարդները զոհ կուտան 35 հոգի, որոնք չարաչար կսպանին. երկու անչափահաս պատանի առ ահի մեռած ձեւանալով՝ ազատիլ կը փորձեն. բայց անգութներուն սուրը ասոնց ալ չինայեր: Մինչդեռ բլուրին վրայ այս բաները տեղի կունենային, անդին կիները խաբւելով՝ թէ կողոպուտէ ազատ պիտի ըլլան, իրենց զարդերն ու դրամները մարդասպաններուն կը յանձնեն՝ իբր փրկանք: Ձոհներուն դիակները փողոցները մնացին շաբաթներով՝ ի տես իրենց սիրելիներուն. անթիւ են կոյսերու և հարսերու բռնաբարութիւնները:

Հոկտ. 23-ին, կիրակի օր, պատարագի ժամուն, կը յարձակին Քուշնայի վրայ. պատարագի քահանան և բազմութիւնը եկեղեցիին հետ մերկացնելէ ետք՝ տուներուն կսկսին և կայրեն 4 տուն: Գիւղացիները զոհ տւին 8 հոգի կրօնափոխութեան համար:

Հոկտ. 24-ին, հրոսախուճը մտաւ Եհնէցիք գիւղը, ուր շատ գէշ վարուեցան: Թիւրք գիւղացիները բոլոր ամբարւած ուտելիքէն ինչ որ կրցին՝ տարին, իսկ չեկրցածնին փչացուցին: Եհնէցիքի բնակիչները թէև օրերով ծածուկ տեղեր պահուեցան, բայց պատուոյ բռնաբարութիւնները նորէն անպակաս էին. մարդ մըն ալ չարաչար կերպով յօշոտեցաւ. Քրիստոս չուրանալուն համար: Նոյն օրը յարձակում կրեց նաև Առան գիւղը, ուր ամեն բան կողոպուելէ զատ՝ մեռցուցին Եւա անուն կինը, որ կարթէր եկեղեցիին մէջ. մարդ մըն ալ մեռաւ թլփատութեան չգիմանալով:

Հոկտ. 25-ին, այս գիւղերուն բախտակից եղան Հասկնի և Խոռոչ գիւղերը: Միւսնոյն ահաբեկ արարքները հոս ալ տեղի ունեցան: Եկեղեցին սրբապղծեցին, սրբբազան անօթներն ու թանկագին իրերը առին տարին: Բռնաբարութիւնները միշտ անպակաս:

Հոկտ. 26-ին, կողոպուիչներու յարձակումին ենթարկուեցաւ Ծագ գիւղը. սպանութենէ զատ ամեն բան ըրին հոս. այրեցին չորս տուն, եկեղեցին սրբապղծեցին և գիւղը ոչինչ թողուցին: Մինչդեռ մեր կողմերէ այս գիւղերը կը զարնէին, անդին, Արաբկիր բոցերով շարժապատուած էր:

Շեփիկ գիւղը ոչ նւազ դառնութեան մէջ էր. ուրիշ հրոսախուճեր ալ հոն դիմեր էին. նախ հարիւր ոսկի

տիւր բռնաբարւած, կոյսեր ու հարսներ բռնի կրօնափոխ ըրած են և նորէն չէ լեցւած իրենց չար ցանկութիւնը. կը շարունակին տակաւին աւելի ու աւելի կատաղի կերպով:

Տեղ տեղ միայն արիասիրտ հայ գիւղացիներ դատարկ ձեռքով կարողացած է պաշտպանել ինքզինք գէթ մասամբ միայն ինչպէս Փայլները ու Նոր-Գեղ, որ առաջինին պէս տասը օր դիմադրած է թշնամուն:

Ահա ներկայացնենք այստեղ համառօտ կերպով Ռշտունեաց գաւառի հարստահարւած գիւղերու ցանկը ամփոփ տեղեկագրով:

1. Փայլներ գիւղ 70 տուն. 10 տուն թալանւած, 1 վիրաւոր, 300 ոչխար յափշտակւած:
 2. Նարեկ 110 տուն. 8 թալանւած, 110 ոչխար տարւած, 4 դէզ վառւած:
 3. Արբերդ 30 տուն. 7 տան ոչխարը տարւած. ամեն օր քիւրդերու նէր պիտի տան.
 4. Թրիճ 25 տուն. 1 մարդ սպանւած, 1 վիրաւոր, 150 մեղրի փեթակ ու 100 ոչխար յափշտակւած:
 5. Պաղոնիս 40 տուն. 3 թալանւած:
 6. Պափվանց 30 տուն. 3 կին պղծւած 1 տան ոչխարը տարւած:
 7. Նոր-Շող 40 տուն. եկեղեցւոյ սպասները յափշտակւած, բոլոր գիւղը թալանւած, 500-ի մօտ ոչխար տարւած:
 8. Թատանանց 60 տուն ամբողջ կողոպտւած, մէկ քահանայ, երկու աշխարհական սպանւած, եկեղեցիներ կողոպտւած, հազարի չափ ոչխար տարւած:
 9. Ալավանց 35 տուն. գիւղը բոլորովին կողոպտւած. 40 հոգի գիւղացիք Աղթամար կղզին քաշւած են:
 10. Նոր-Գեղ 40 տուն. 4 եղ տարւած:
 11. Մոխրաբերդ 90 տուն. 5 եղ և 1 տան ոչխար տարւած:
 12. Գանձակ 40 տուն. ամբողջ կողոպտւած, հարիւրի չափ ոչխար տարւած. բնակիչներուն կէսը Աղթամար քաշւած են, կէսն ալ ծովուն վրայ նաւով կը շրջին:
 13. Առուենց 30 տուն. 4 կին առևանգւած, 1 կին վիրաւոր, հինգհարիւր ոչխար տարւած, գիւղը բոլորովին կողոպտւած ու քանգւած:
 14. Յաղուն 20 տուն. հարիւր ոչխար տարւած:
 15. Շատւան 40 տուն հայ. 3 կողոպտւած, գիւղին քիւրդերու ապրուստը հայերու վրայ է. կրօնի և պատի բռնաբարութիւններ եղած են. տասը եղ մորթւած:
 16. Յաղթ 45 տուն. բոլոր ոչխարները (հազարի մօտ) տարւած. ընդհանուր թալան ու աւերում, մարդասպանութիւններ, բոլոր գիւղացիք գաղթած են:
 17. Վերին Սարէ 15 տուն. բոլորովին աւերւած, չենքն անգամ չկայ:
- Այս բոլորը մէկ ամսան մէջ կատարւած են:

ՆՈՒՐԱՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական սնդուկի մէջ ստացւած են.

Փայտ 100 օսմ. ոսկի, Ս. Խաչի Ընկ. 3000 ֆրանկ, Մաշկ 50 օսմ. ոսկի, Շուշան 50 օսմ. ոսկի, Դոյն 50 օսմ. ոսկի, Գործիք 25 օսմ. ոսկի, Փայլակ 20 օսմ. ոսկի, Զուլթակ 20 օսմ. ոսկի, Սրտոտ 400 ֆրանկ, Մանուշակ 3 օսմ. ոսկի, Դուռ թիւ 10, 100 օսմ. ոսկի. Ն. Մկրատ 50 օսմ. ոսկի Կոկորդիլոս 50 օսմ. ոսկի, Աթոռ 25 օսմ. ոսկի, Աբենիսեր 10 օսմ. ոսկի:

Արշակաւան քաղաքի Կեդրոնական սնդուկի մէջ ստացւած են.

Առիւծ խ. 80 դճ., Մամիկոնեան խ. 20 դճ., Աղատական խ. 55 դճ., Հայուհեաց խ. 20 դճ., Պետրոս 15 դճ., Օժանդակ 20 դճ., Ասպատակ խ. 20 դճ., Վանական խ. 35 դճ., Ասպտամբ խ. 20 դճ., Մասիս 40 դճ., Արծիւ խ. 70 դճ., Վահանեանց խ. 50 դճ., Ծիծի 20 դճ., Փիլիճ 10 դճ., Մամիկոնեան բ. խ. 30 դճ., Վոյր 20 դճ., Բոց 54 դճ., Գագիկ 10 դճ., Յոյս 20 դճ., Սիսակ խ. 100 դճ., Ենիչերի խ. 75 դճ., Ծմակ խ. 85 դճ., Ապուպերճ 4. 30 դճ., Զեփիւռ 40 դճ., Ա. ժանակ խ. 50 դճ., Խոհարար 20 դճ., Մասիս 40 դճ., Օր. Մառի 10 դճ.:

Սար գիւղէն—Գայլ Վահան խ. 150 դճ., Սուր խ. 60 դճ., Պողբ խ. 50 դճ., Կ. Հրիկ 20 դճ., Ազնիւ 20 դճ., Դաշտ 15 դճ., Դանակ 10 դճ., Հայ 10 դճ., Երկաթ 10 դճ., Ոչխար 50 դճ., Տիրակէր 20 դճ., Ստեփան 88 դճ., Վաստակ 20 դճ., Հրացանք 40 դճ., Խողբ 20 դճ., Գոռող 90 դճ., Սաթ 30 դճ., Մեր 128 դճ., Աղանի 27 դճ., Թորգոմ 40 դճ., Մասկինա 120 դճ., Խնձոր 120 դճ., Ուրագ 108 դճ., Վահան երիտասարդ 40 դճ., Արաքսի դուստր 40 դճ., Ռոպէնսոն 85 դճ., Նազլու 40 դճ., Խոհեմ 43 դճ., Ազգասէր 40 դճ., Շուշան 75 դճ., Կեռաս 40 դճ., Զեռք 20 դճ., Գինի 20 դճ., Ծաղիկ 20 դճ., Քաղցր 20 դճ., Գինով 25 դճ., Ոչինչ 20 դճ., Սուր 20 դճ., Պերճ 20 դճ., Հայկ 20 դճ., Ոթոն 20 դճ., Աշխ-Խաթուն 190 դճ., Կաթ 25 դճ., Կամբ 25 դճ., Խելք 20 դճ., Թագուհի 20 դճ., Մակարդ 25 դճ., Նար-Պէյ 25 դճ., Ծաղիկ 90 դճ., Խոհեմ 12 դճ.:

Սարիկ գիւղի ազգասէրներէն 680 դճ.:

Մանիշակ քաղաքէն—Երկաթ խ. 100 դճ., Սուրհանդակ խ. 200 դճ., Կորիչ խ. 50 դճ., Թունաւորիչ խ. 40 դճ., Անհատներէ 200 դճ.:

Քուշանաց քաղաքէն—Մամուռն Ղազարի 20 ոսկի: Գողթաթ նւիրեց մէկ ղինչէսթը հրացան և 65 փամփուշտ:


Դաշնակցութեան անձանցներէց ինտուում է թղթակցութեան և նւիրատուութեան համար դիմել.

Armène-Gaspar, poste restante. Carouge (Suisse).

L. Boole, 19, Russell Road, Kensington, London W.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ սպարան:

ԴՐՈՇԱԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Չ Վ Հ Ա Տ Ի Ն Ք Կ Ռ Ի Ե Լ

Այսպիսի մի ճգնաժամին, երբ տաճկահայ ժողովուրդը, դրա հետ և Հայկական խնդիրը ծանր ու դժուարին ընկած են անցկացնում, երբ Հայկական հորիզոնի վրայ դեռ չէ երևում ոչ մի աստղ և ամենայն ինչ սև մթնոլորտի մեջ է, այսպիսի մի ընկած անհրաժեշտ է ունենալ կամքի ոյժ ու քաղաքացիական արիություն՝ դիտելու այդ վտանգալոր դրությունը և ընդդիմադրելու նրան:

Բայց ներկայումս ի՞նչ է տեղի ունենում մեր կեանքում.— ժողովրդի մի մասի մեջ տիրում է յուսահատություն, մի երկու ամիս առաջ ոգևորած և սպանական ճառեր խոսողները սկսում են լռել, պապանձակել, «ազգասերները» քաշվել, մի անկիւն մտնել, մի խօսքով, նրանք, որոնք վարժ են արեղակի տաքություն, թեթև ցրտից սկսել են դողալ ու սենեակները մտնել... իսկ սրանց տեղը բռնում են նրանք, որոնք այս վերջին ժամանակներս չէին երևում, որոնք միշտ հակառակ են եղել յեղափոխության և քարոզել են խաղաղ կուլտուրական մրցում կամ ամեն ինչ թողնել ճակատագրին... Սրանց հետ միասին օտի են կանգնում և նրանք, որոնք սուլթանի կառավարության ազնվաներն (գործակալ) են և գործում են Հայկական կեանքում համաձայն նրա ծրագրի, որոնք ժողովրդին մղում են անպայման հնազանդության: Մի խօսքով, Հայկական կեանքի հորիզոնի վրայ երևում են, մի կողմից յուսահատություն ու Լքում, մյուս կողմից օձի ծնունդների գլուխ բարձրացնելը, որոնք մտած իրենց բուռները մեռած էին ձևանում և իրեն հետևանք այդ բոլորի, մեր կեանքում, յեղափոխական տեսակետից, նկատում են թեպետային նշոյլներ— այստեղ, այնտեղ խմբեր են երևում, որոնք աշխատում են ժողովրդին յետ մղել, որոնք ժողովրդին քարոզում են յետ նահանջին:

Կրուկները ծանր ու վտանգալոր է, մանապէս նա ծանր է դառնում քաղաքացիական սկսելովը և

որ ժողովրդի կեանքում տեղի չեն ունեցել այսպիսի ծանր ընկածներ. նոյն իսկ մեր, հայերիս կեանքում քանի՜ քանի՜ այս տեսակ ծանր ընկածներ են եղել բայց և այնպէս ժողովուրդը չէ մեռել ապրել է: Կապրիք և մեք ու կը յաղթենք, և պարզապէս այն պատճառով, որ մեք կուր եք մղում բռնակալի, բռնակալական ընկածի դէմ և ոչ թէ մի որ և է ժողովրդի. մեր կուրը «ցեղական» չէ, այլ ազատութեան. մեք կըրուում եք այնպիսի մի դրություն դէմ, որը հիւանդոտ մարդկային կեանքի ծնունդն է, որը մեռնում է այն ամեն ինչ, որ տանում է քաղաքակրթության, կատարելագործութեան: Եւ որովհետեւ պատմութեանը, մարդկային կեանքը ապացուցել հաստատել են, որ բռնակալի և ժողովրդի մեջ մղած կուրում յաղթողը միշտ ժողովուրդն է լինում, որովհետեւ իրերի ընթացքը, կեանքի հոսանքը տանում է դեպի կատարելագործությունը, իսկ բռնակալութիւնը իւր հոլովածութեամբ ու կազմաւորում մի խոչընդոտ է, պարզ է, որ նա պիտի յաղթուի, որ այդ արդեւքը պիտի վերանայ: Սա ենթադրություն չէ, այլ պարզ մի ճշմարտութիւն. և այսպէս լինելով հասկանալի է, որ մեր կեանքի ներկայ անսխիւթար ու աննպաստ պայմանները վճատեցուցիչ չեն, այլ որ մեք գտնուում եք մի վտանգալոր դրություն, կրիզիսի մեջ:

Մենք արդէն քանիցս մատնացուց ենք եղել մեր մղած կուր այս յատկութեան ու բնաւորութեան վրայ, շեշտելով որ գոյութեան կուրում երբ կուր մղողները բռնակալը ու ժողովուրդն է, յաղթողը լինում է միշտ ժողովուրդը, չնայած որ, յաճախ տեղի են ունենում կուր ժողովրդի կեանքում յուսահատեցնող, վճատեցնող ընկածներ, չնայած այդ կուրը շատ թանգ է նստում ժողովրդին, ըլլաւում է նրան:

Այսպիսի մի ծանր ընկածում, մենք դարձեալ մասնացոյց ենք լինում դրա վրայ ու հրաւիրում հայ ժողովրդին շահասեր չլքանալ չքայլելը որովհետեւ դրանով իւրը իւր գերեզմանը կը փորէ, այլ արհամարել դառն երևոյթը և մեռը տաճ իւր յեղափոխական պաշտպաններն, արիութեամբ շարունակէ մղել իւր կուրը, որովհետեւ յաղթութիւնը վերջ ի վերջոյ իրենն է իսկ յաղթելը ու յաղթելը տեղի է ունենում կուր մեջ, ուրեմն կուրնք շարունակաբար արհամարելով

բորբոսնած ուղեղներով գործողներին, կոխկոտելով սողուններին ու դաւաճաններին և հարւածելով թըշնամուն: Որքան էլ մեր կեանքի հորիզոնը ամպամած լինի, բայց դարձեալ ազատութեան աստղը երևալու է, ունենանք արիւթիւն ու քաղաքացիական պարտաճանաչութիւն կուեցու:

Հուսու

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ

(ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԻՑ)

III

30/11 յունւարի

Վարնոյ այսպէս ասած՝ *բ ու ը ժ ու լ ա դ ա ս ա կ ա ռ* գ ը, որ դեռ երէկ ցոյց էր տալիս իրեն հետաքրքրուող հասարակական հարցերով, որը գործ էր դնում ամեն աշխատանք յեղափոխականների համակրանքը վայելելու համար և որը մինչև անգամ ձգտում էր յեղափոխական շարժման ղեկավար հանդիսանալ նոյն այդ դասակարգը՝ հենց որ փոխւեցին հանգամանքները և կռի ծանր նժարը հակեց դէպի Օսմ. բռնապետութիւնը, շուռ տւեց երեսը յեղափոխականներից, սկսեց հալածել նրանց, տարիների ընթացքում կառավարութեան շուրջը քծնելու սովորած հայ էֆէնտիները անտարբեր աչքերով չկարողացան տեսնել իրենց շահերի քայքայումը և մոռացած ամբոխին, մոռացած բազմաչար բողոքողին, մտան իրենց իսկական դերի մէջ — *բ ու ը ժ ու լ ա զ ի ա յ ի պ ա տ մ ա կ ա ն դ ե ռ ը* որը պայմանաւորում է անձնական շահերով և հասարակական շահերի դաւաճանութեամբ: Ահա թէ ինչպէս վարւեցին Վարնոյ վսեմաշուք էֆէնտիները կոտորածից յետոյ:

Հրաւիրւելով Շաքիր փաշայի և նահանգապետի մօտ, նրանք մեղադրեցին առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանեանցին, իբրև յեղափոխական շարժման պարագլուխ: Նոյն մեղադրանքը դրին նաև ժողովրդից մի քանի անձերի և առհասարակ արհեստաւոր երիտասարդութեան վրայ: Բացի դրանից նրանք շնորհակալութիւն յայտնեցին կառավարութեան «յանուն սուլթանի», որ ճնողական սիրուց դրուած՝ կամեցել էր կոտորածով պատժել ստահակ զաւակներին. տեսէ՛ք ո՞ր է հասնում թրքական լօգիկան — նրանց լրբութիւնը: Բայց այդ բոլորը եղան սկիզբն հայ էֆէնտիների շահատակութիւնների. Շաքիրի մի «աֆէրիմը» (կեցցես) լսելու և կառավարութեան վստահութիւնը գրաւելու համար նրանք աւելի ծայրայեղ միջոցների դիմեցին: Միջանկեալ ասենք, որ «բարենորոգիչ-կոմիսար» Շաքիրի Վարին մուտ գործելիս, Շիշմանեան եպիսկոպոս Հ. Յ. Գաշնակցութեան տեղական կոմիտէի խորհրդով հրաժարւել էր դիմաւորելու նրան. նոյն արգելքը դրւել էր նաև հասարակութիւնից զանազան մարդկանց վրայ:

Ծանր էր յեղափոխականների կողմից տրւած հարւածը և Շաքիր փաշան յարմար առիթի էր սպասում իւր վրէժը լուծելու. առաջնորդից, որին համարում էր առհասարակ աղբիւր ամենայն չարեաց:

Վոտորածից գրեթէ մի ամիս յետոյ՝ հայերին նորից կոտորել տալու սպառնալիքով, նա հրաւիրեց հայ հարուստներին և պահանջեց նրանցից հեռացնել տեղական առաջնորդին: Նրա իւրաքանչիւր հրամանը ճշդութեամբ կատարելու պատրաստ հայ էֆէնտիները հենց փաշայի մօտ կազմեցին հեռագիր և ուղարկեցին պատրիարք Իզմիրլեանին, պահանջելով Շիշմանեանի անմիջական հեռացումը: Պատրիարքը — ինչպէս արդէն սպասուում էր — կատարելապէս անհետեանք թողեց այդ հեռագիրը, այնուամենայնիւ էֆէնտիները չյուսահատուեցին և Շաքիրի խորհրդով աւելի շատ ստորագրութիւններով կազմեցին երկրորդ հեռագիր. բացի դրանից Պատրիարքարան դիմեցին նաև հանրագրի ձև մի պաշտօնագրով, որը շարունակ մի քանի օր ման էին ածել տալիս տները և բռնի ստորագրել տալիս սրան, նրան: Պատրիարքը դարձեալ մնաց անդրդուելի և գոհունակութեամբ արձանագրում ենք, որ Շիշմանեան սրբազան երբէք տեղի չուեց ոչ մի սպառնալիքի առջև. երևի սրբազանը հասկացել էր, որ քաջ հովիւը իր անձը դնում է յօգուտ իւր ոչխարների: Այնուհետև վերին աստիճանի ծիծաղելի էր հայ վսեմաշուքների դրութիւնը. ամեն կերպ աշխատել էին, բայց չկարողացան վայելել իրենց աշխատանքի պտուղը. այս դէպքում մեծ էր նոյնպէս Շաքիրի պարտութիւնը և ահա նա ամօոյս *) դիմեց վճռական միջոցի:

Առաւօտը վաղ մի ոստիկանական պաշտօնեայի միջոցաւ հրաւիրւելով իւր մօտ Շիշմանեան սրբազանին, հարողեց նրան իր առեյի սէնիյ էն (բարձրագոյն հրաման) երկու ժամայ ընթացքում Վարինից դուրս գալու մասին: Նրան արգելեց մինչև անգամ քրոջ տեսնել և կառքը հենց փաշայի մօտից ձանապարհ ընկաւ դէպի Վ. Պոլիս, ոստիկանական խիստ հսկողութեան ներքև: Յետոյ իմացեց, որ վճռւած է նրան քստրել Երուսաղէմ՝ 20 ոսկի ամսաթօշակով. ասում են, որ առանց Վ. Պոլիս հանդիպելու շոգենաւը կանցնի Երուսաղէմ:

Առաջնորդին քստրելուց երեք օր յետոյ, Շաքիր փաշան նորից հրաւիրեց հայ երևելիներին և այս անգամ նրանց ստորագրել տւեց շնորհակալութեան՝ հեռագիր սուլթանին ուղղեալ այն հայրական հոգածութեան համար, որին արժանանալու երջանկութիւնը ունեցել են կարնեցիք 1891 թւականից դէսը, կոտորւելով չորրորդ անգամ:

Հեռի լինելով նոյն իսկ երկիւղի պատճառով կատարած այս փաստերը արդարացնելու ցանկութիւնից, շտապում ենք յանուն արդարութեան արձանագրել այստեղ, որ Վարնոյ աշխաշուք էֆէնտիներից շատերը կառավարութեան տւին զանազան ցուցումներ անցեալում կատարւած յեղափոխական գործերի վերաբերմամբ և ղեկավարներ հանդիսացան ժողովրդական արդար շահերը կառավարութեան ինտրիգներին զոհ բերելու արշաւանքին մէջ:

*) Թւականը անընթեռնի էր:

IV

Հոկա. 18-ից անցել է մտաւորապէս երկուք ու կէս ամիս, բայց ոչ մի բոպէ չի մոռացուում սարսափելի կոտորածը. երևակայեցէք ի՞նչ անտանելի դրուժին: որտեղ նստում ես՝ խօսուում է՝ միմիայն վերջին անցքերի վրայ. խօսակցութեան տարբեր նիւթ չկայ: Անցեալ օր մի չափազանց վստահելի երիտասարդ Հետեւեալը պատմեց, որ իբրև բնաորոշ կուրեօզ (Հետաքրքրական դէպք), հարկ ենք համարում հաղորդել «Պրօշակ»-ի ընթերցողներին. «Կոտորածը սկսելուց երկու ժամ յետոյ—ասում է նա—տուն փախչիլ կամենալով՝ ես դուրս եկայ իմ թագստոցից և անուղղակի ճանապարհներով դիմեցի դէպի տուն. Գրք-2էշմէ ասուած թրքաբնակ թաղով անցկենալիս՝ պատահեցի, ըստ երևոյթին, մի տարեց թիւրքի որը յանկարծ բռնեց ձեռքիցս և առաջնորդեց ինձ դէպի իւր տունը. «Կէլ սէնի ազատ իտէրիմ» ասելով (արի՛ քեզ ազատեմ): Տարաւ ինձ իւր սենեակը, նըստացրեց և մի ամբողջ ժամ հարց ու փորձի ժամանակ կարծես կամենում էր նա սփոփել ինձ. քաղցր խօսքերով. յանկարծ վերկացաւ տեղիցը, իջեցրեց սուրը և հրամայեց ինձ մերկանալ: Ես նրան աղաչում էի, պաղատում էի, որ խնայէ իմ կեանքը, բայց բոլոր աղաչանքս անցաւ ապարդիւն. ստիպած մերկացայ համարեա՛ բոլորովին. և ահա Մէհմէտ աղան—այսպէս էր նրա անունը—սկսեց սրի մեղմ հարածներ տալ թևերիս, ծնկներիս և առհասարակ մարմնիս անվնաս մասերին: «Ի՞նչ ես անում ակր, Մէհմէտ աղա, չէ որ խոստացար դու ազատել իմ կեանքը»: իմ հարցին՝ նա սրբեց արդէն արիննաշաղախ սուրը և դնելով պատեանի մէջ, պատասխանեց «Ձարար եօզ օղլում, պիզիմ քիթապըն հիւքմի տիր քի կեափուրտան մութլազ գան չըգարտմալը»: (Վնաս չունի, զաւակս, մեր ս. գիրքը տրամադրում է անպատճառ արինն դուրս բերել կեափուրից): Այդ բոպէին ներքին մի գոհանակութիւն փայլում էր նրա դէմքի վրայ. խնամքով փաթաթեց վերքերս, դեղ դրեց և հաց կերցնելուց ու թէյ խմացնելուց յետոյ, ինձ ճանապարհ գցեց դէպի տուն»:

Ահա թէ ի՞նչ է նշանակում մահմեդական կրօնական ֆանատիկութիւնը:

Թայրույ

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Պ Ա Ր Ս Վ Ա - Տ Ա Ճ Կ Ա Կ Ա Ն Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Լ Խ Ի Յ

IV

Պարսկաստանի սահմանակից Աղբակ գաւառի ամբողջ հայ գիւղերը, ըստ սովորականի, ենթարկւեցին անուր բարբարոսութիւնների, թալանուումների և սպանուութիւնների, տեղացի և դրացի մի քանի քիւրդ ցեղերի կողմից, որոնք կոչուում են՝ գարդարցիներ, մերզիցիներ, մէհմէտցիներ և այլն: Ամբողջ գիւղերը մտաւորապէս 23, մոխրակոյտեր են շինել. բնակիչները նրանք, որոնք կարողացել են ազատել լցւել են Աղբակի գաւառա-

կան քաղաքը՝ Բաշկալէ, մի մասը անցնում է սահմանը և թափւում սահմանակից Սալմաստի և Ուրմեալի գիւղերը, իսկ մնացածներին՝ ձեռք ընկածներին, կոտորում են, կանանցը բռնաբարում, մալ տաւար թալանում տանում լճ, լճ կանչելով: Հայ աղջկերանց ստիքներում իրենց նիզակները խրելով զարճանում են և դիւային ուրախ բացագանջութիւններով իրար խրախուսում՝ «Կէլըն, կոթըն, էվ Ֆլայ ա, թալան մալէ Ֆլան ա»: (Ձարկէք, սպանեցէք, սա հայ է, Ֆլայի-հայի նախատական անդնը—ապրանքի թալան է...) Այդ բոլորի անել տուող Բաշկալայում նստող շէյխ Համիդն է, մի փտած, ատամները թափած հին գայլ, իր ձեռքի տակ ունենալով մարզիցիների պետ՝ Շարաֆ պէյին, շիկակների ցեղապետ՝ Մահմատ փաշային և սրանց նման մի քանի պատուհասներին...

Թալանուած տաւարի, ոչխարի և կատարած օր ցեղեկով սպանութիւնների թւերը հետեւեալներն են.—

	ՈՉԽԱՐ	ԳՈՄԵՇ	ԵՉ, ԿՈՎ	ՍՊԱՆ.
Բիս	700	24	45	2
Սօրան	500	—	—	1
Բերդակ	400	12	29	1
Բազ	800	40	80	2
Առակ	500	30	50	2
Մալքաւա	600	50	85	2
Ճամէպատկան	800	40	90	—
Խառատան	500	20	50	—
Հէրէսան	800	34	90	—
Չուխ	500	21	70	—
Գարաբուլի	600	25	75	—
Երնկէնի	900	50	120	2
Բժնկերտ	600	30	50	—
Բարլասան	800	40	90	2
Սօրատէր	1200	70	150	1
ՉըուգեաՎկ	600	15	50	1
Աշկերտ	300	13	40	1
Լաշիտ	120	8	18	1
Ճուլամէրիկ	—	—	—	1
	11,220	502	1182	19

Առեւանգել են Բազ գիւղում մի հարս, իսկ Առակ գիւղում՝ մի աղջիկ և մի հարս: Առեւանգուումներ տեղի են ունեցել և՛ Հէրէսան և Գարաբուլի գիւղերում:

Ծորեն, իւր պանիր և՛ ուրիշ բոլոր ուտելիքները շէյխ Համիդը իր արբանեակներով լցրին իրենց ամբարները, իսկ խեղճ գիւղացիները դռները ընկած հաց են մուրում...

**

Աղբակ գաւառի արեւմտեան կողմերում գտնուում են Նորդուզ, Մոկս, Շատախ, Խիզան, Ոզմ, Գառգառ և այլն հայ ազգաբնակութիւններով լեցած գաւառները, որտեղեղում նոյնպէս ոչ մի չէն գիւղ չի մնացել, բոլորն էլ ենթարկւել են Աղբակի սարսափեցնող վիճակին: Վերոյիշեալ Խիզան, Ոզմ և Գառգառ գաւառների ամբողջ հայ ազգաբնակութիւնը վերջերս մահմեդականացան և այդպիսով ազատեցին սոսկալի կոտորածից: Գրաւացի քրդերը քանիցս անգամ յարձակուում են Խիզանի Ս. Խաչ վանքի վրայ, բայց վանահայր Սահակ

վարդապետը 20 հոգով երկար պաշտպանուով է: Կատարած քրդերը վանքին տիրանալով՝ վանահորը մորթագերծ են անում և յարդալից մորթին կախ են տալիս ծառից 4 օր:

Վերոյիշեալ գաւառները թալանողներ գլխաւորապէս գրաւանցի, տիտէրցի և խալիլանցի քիւրդերն են:

Վանի կից հին Երւանդունիք գաւառը — այժմեան Հայոց Չորր, Թալանելիս, գրաւանցիներիցեղապետ Թամէն երբ իր հրոսակախմբով կը մտնի Գրզըղաղ անունով գիւղը, գիւղի ուես, մահտեսի Փոխան կտրիճ ծերունին, հրացանը ձեռքին դուրս կը գայ ընդ առաջ Թամէի և մի գնդակի հարւածով թաւալգոր. գետին կը փռի աւազակ ցեղապետին: Կտրիճ ծերունուն յաջողուով է առ ժամանակ ետ կանգնեցնել հրոսակներին. ցեղապետի սպանութիւնը տեսնելով, քիւրդերը պատրաստուով են փախչելու. բայց քիչ յետոյ կրկին յարձակուով ամբողջ գիւղը թալանուով, կոտորուով են: մահտեսի Փոխանը մի կերպ ազատուով է: Ամբողջ Հայոց Չորի գիւղերը Գրզըղաղի դժբախտութեան ենթարկելով՝ հեռանում են: Մահմուտիէ գաւառի ամբողջ գիւղերում էլ ոչ մի շնչաւոր չեն թողել: Բողազ-Քեասան և Աղարա գիւղերի տեղերն անգամ չեն երևում: Սրանք այն գիւղերն են, որտեղ երևացել են Հայ Տայրուկային խումբերը Սարայի 2501-2իմանում կատարած քաջագործութիւններից վերջ և որտեղ մեր քաջարի խումբը սպանել էր Ջնդի և Շաւէշ քիւրդ-հրոսակապետներին իրենց խողաններից շատերի հետ միասին, որտեղից և անձնուրացների խումբը պատռելով քըրդերի շղթան՝ անյայտանում է Աղթա-դաղի լեռներում:

Վերջապէս ամբողջ Վասպուրական նահանգը՝ սար, քար, դաշտ ու ձոր, գետ ու առակ կարմիր են ներկւել: Լէնկ-Թեմուրի, Շահ-Աբբասի ժամանակներն են մեզ յիշեցնում ամենավառ գոյներով: Մէջտեղում մնացել է միայն Վանը, որտեղ դեռ չէ համարձակուով կառավարութիւնը կոտորած անել արեան հեղեղներ հոսեցնել: Շրջակայ ամբողջ գաւառներից ովքեր կարողացել են իրենց ջանն ազատել, թափւել են Վան: Այստեղ էլ բացի սպանացող սոսկալի կոտորածից, որ ըրպէ առ ըրպէ սպասուով է, անտանելի սոյն էլ միւս կողմից սկսել է տանջել առանց այն էլ մաշած, հաւած խեղճ Հայ ժողովրդին:

Վերջերս Բիթլիսի կոտորածի հերոս փաշան մի քանի վաշտ զօրքով Վան է եկել: Քաղաքի շուրջն արդէն սոված գայլերի նման հազարաւոր ձիաւորներով պատրաստ հսկում և սպասում են քիւրդերը, որպէսզի հենց առաջին նշանից սկսեն թալանը և կոտորածը դրսից, իսկ ներսից արդէն կանոնաւոր, բաւականաչափ մեծ թաւով զօրքը և զինւած տանիկ հասարակութիւնը պատրաստ է և անհամբերութեամբ առանձնը կրճատացնելով բարձրագոյն հրամանին է սպասում իսկ իրենց ցանկալի հրամանը ցարդ ուշանում է, իսկ առանց պարձրագոյն հրամանի չեն համարձակուով:

Մ. Մանուկ

Կ Ա Տ Ո Ր Ա Ծ Ն Ե Ր

Մ Ո Ւ Շ

I

20/1 նոյեմբեր

Հոկտ. 14-ին, շաբաթ օր, քաղաքիս Հայ հասարակութիւնը վաճառանոց իջած, իւրաքանչիւր ոք իր գործին և աշխատանքին գնացած միջոցին, նկատելով թիւքք հասարակութեան տարօրինակ սպառազինումն և խումբ խումբ հրապարակի վրայ շրջելը և ասդիէն-անդիէն առնելով երկիւղալի լուրեր, ահ ու սարսափով պաշարւած՝ խանութնին փակած և գործերնին թողով իրենց տուններն սպաստանած են: Այդ միջոցին վրայ հասնելով Բաղէշի սոսկալի կոտորածի լուրն, այլևս հաստատեցան տեղոյս Հայ հասարակութեան իրաւացի կասկածներն և երկիւղն: Բաղէշի դէպքի լուրն պաշտոնական հեռագրով հասաւ կուսակալէն տեղոյս կառավարչին, որ թէև այդ դէպքը Հայոց նախաձեռնութեամբ կատարւած լինելը կը հաղորդէր, սակայն Բաղէշի դիքքին և ազգաբնակչութեան ծանօթ մարդիկ հաստատապէս համոզւած էին, թէ Հայք ծանր կոտորած են կրած թիւքք խուժանէն և կառավարութիւնը Հայոց կը վերագրէ, չգիտենք ի՞նչ սատանայական դատարութեամբ:

Եւ արդարև, ինչպէս թիւքքերի ընթացքէն և սպանալիքներէն յայտնի կերևեր, նոյն օրն ի գործ պիտի դնէին իրենց չար նպատակը, եթէ Հայերը չի նախազգուշանային:

Յանկարծ 50 հոգիէ բաղկացած մի հեծելազունդ զինուոր քաղաքիս Հայոց թաղերն շրջելու հանւեցան, որոնց զօրապետը դառնալով եկեղեցիին առջև հաւաքւած Հայ հասարակութեան, ըսած է հետևեալ անարգական խօսքը՝ «Քեաֆիրդէ՛ր, պու շէյլերին սեպէպի հէփ սիզ սինիզ (անհաւատներ, այս բաների բոլոր պատճառը դուք էք)»:

Տեղոյս կառավարիչ փաշան Հայ և թիւքք երևելիներն հաւաքելով իւր տունը, հետևեալ ուշագրաւ և զարմանալի յայտարարութիւնը ըրաւ Հայ երևելիներին սպանական լեզւով՝ «Երեկ միջօրէին Բաղէշի հայեր թիւքքաց աղետքի ատեն յարձակեք են մղկիթների վրայ և լուսամուտներէն ու դռներէն դուրսկա հար են արեր և սպաներ իսլամ հասարակութիւնից 80, իսկ զինուորներից 80 հոգի: այստեղ, Մուշ ալ հայեր պիտի յարձակին եղեր իսլամաց վրայ, ուստի պէտք է որ դուք միջոցներ ձեռք անէք վտանգին առաջն առնելու համար»:

Հայ երևելիներէն Սերունի Եովհաննէս Էֆենդի ազդուապէս գիտողութիւն ըրած է, թէ բարձրագոյնապէս անկարելի է, որ Բաղէշի Հայեր յարձակած լինին իսլամաց վրայ և բոլորովին անհասար է որ Մայ հայերն ևս յարձակին և անկարգութիւններ առաջ բերեն: Կառավարիչը զայրացած նորա այդ յանդուգն պատասխանին՝ դէմ բացադառնելը է՝ «Ինք


ինչպէս կը յանդգնիք սխալ հանել վարկին տւած պաշտօնական հեռագիրը. հիմա զձեզ տասն տարւան բանտարկութեան դատապարտել կը տամ: Հայեր չէի՞ն, որ կայսերական այսքան երկիրների մէջ յարձակումներ գործեցին և խռովութիւններ յարուցին. հայեր չէի՞ն, որ քիչ մնաց մայրաքաղաքը առկուտայ դարձնէին, այժմ էլ կը համարձակիք ըսել թէ հայեր այդպիսի անկարգութիւններ չեն կարող ընել:՝ Վառավարիչը պահանջներ է հայերէն՝ ստորագրութեամբ երաշխարկել հայ հասարակութեանը և վաճառանցները բանալ տալ. իսկ հայք պատասխաններ են՝ թիւրքերէն պահանջներ ստորագրութիւն: Այսպէս թեր ու դէմ խօսքերէ յետոյ, կառավարիչը արտօներ է հայ երևելիներին մեկնել մի քանի ժամէն յետոյ դարձեալ հաւաքելու և այս խնդրոյ վերջ մը տալու յանձնարարութեամբ: Ապա դիմելով Անգլիական հիւպատոսարան, խնդրել է դեր-հիւպատոսէն, որ Բաղէշի պատահած դէպքը կառավարութեան ծանուցման համաձայն հեռագրէ ի Պոլիս, իւր գեսպանատան: Թէև չգիտենք Անգլիական դեր-հիւպատոսի տւած հեռագրի պարունակութիւն, սակայն առաջնորդի փոխանորդ Տօր հետ մի տեսակցութեան մէջ հաւատացուցած է, թէ դեսպանատան հեռագրած է միայն Բաղէշ դէպք պատահած լինելը, իսկ մանրամասնութիւն կը հաղորդէ Բաղէշէն իր ստացած ճշգրիտ տեղեկութիւններէն յետոյ:

Տեղւոյս ծանօթ իւլեմաներէն մոլեռանդ հաճի Թայր, որ ներկայ ամսոյ սկիզբը Բաղէշ էր գնացած, տեղւոյն շէյխերու և իւլեմաներու մասնակցութեամբ, գրգռել և դրդել է իսլամ հասարակութիւնը՝ կողոպտել և կոտորել հայերը: Թէև տեղական կառավարութիւնը ի ցոյց հայոց թնդանօթներ է հաներ քաղաքին բարձրազանգակներին վրայ ու սպաննացեր է թրքաց թաղերը ու յարկածել եթէ չի հանդարտին, եթէ համարձակին հայոց վրայ յարձակիլ: Թիւրքերն ալ սկսեցին արտաքուստ հանդարտութիւն ցոյց տալ, հաճի Թայրի ալ խոստացեր է խռովութիւն չի հանել և մեկներ է Բաղէշէն Մուշ, սակայն անոր մեկնման յաջորդ օրը, հոկտ. 13-ին տեղի ունեցած է դէպքը:

Հաւաստի լինելու ենք, ինչպէս հետզհետէ հասած լուրերն ալ կը հաստատեն, որ հրահանգւած և դրդուած իսլամ խուժանը յարձակելով հայոց վրայ, սարսափելի ջարդ է տւեր անոնց: Արդէն Բաղէշի անցէն և թուով շատ պակաս հայերը չէին կարող դիմադրել նախապատրաստուած տեղական և լեռնաբնակ վայրերի խուժանին յարձակման. այնպէս որ նմանը շատ քիչ անգամ տեսնուած ծանր կորուստներ են տւած: Ուրբաթ օր միջօրէի աղօթքի տոնն, մեծ թուով մօտկանցի և խոյթեցի վայրենաբարոյ աշերներն տեղացիների հետ հաւաքելով մզկիթների մէջ և շրջակայքը և պէտք եղած հրահանգը նոյնիսկ մզկիթներէն առնելէ յետոյ, անմիջապէս բռներ են հայոց վաճառանոցների ճանապարհները և սկսել են սրէ անցնել հայերը, աւարի առնել վաճառանոցներն ու խանութները, ոչ մի բան չթողնելու պայմանաւ Մինչև ցարդ հասած տեղեկութիւններ կիմայնեն, թէ քաղաքացի վաճառականներէն սպանուած են 170 անձ, արհեստարարներէն՝ 300, իսկ պանդուխտներէն և շրջականերէն առևտուրի համար երկրորդներն՝ 380: Խռովիկի գիւղը սարսափեցնելէ կտորած եղած է և սպանուածների թիւը կը հաշուեն

հինգհարիւր անձ. իսկ շրջակայ գիւղերից հազար հինգհարիւրի չափ: Սակայն այս թւերը չէ կարելի ճիշդ համարել. առհասարակ կը կարծուի, թէ սպանուածների թիւը այս նշանակւած գումարներէն շատ աւելի է: Դժբախտաբար մանրամասնութիւնները կը պակսին և ստիպւած ենք քրդերից միայն հատ ու կտոր տեղեկութիւններ քաղել և առ այժմ ադոնցմով գահ լինելը մինչև որ հաղորդակցութիւն հաստատուի և հաստատ տեղեկութիւններ ստացուեն:

Տեղւոյս բաղէշցի վաճառականներ քանի օրէ ի վեր է հեռագրել են Բաղէշի բարեկամներին՝ տեղեկութիւն ստանալու համար, սակայն մինչ ցարդ պատասխան չեն ստացած: Անգլիական դեր-հիւպատոս դէպքին յաջորդ օրը հեռագրած է Մըստըր Չօրձին իրեն և իրենների առողջութեան վրայ տեղեկութիւններ առնելու համար. 3՝ օրէն հազիւ պատասխան ստացաւ, թէ ցարդ ողջ են:



ՏՐԱՊԻՉՈՆԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

(№ 5-ի շարունակութիւն)

26. Հեթում Տիրատուրեան, 30 տարեկան, վաճառական: Իր երեք եղբայրներն շարաշար սպանելէ վերջ կառավարութիւնը յարմար տեսած է ասիկա ալ բանտեր: Վաճառատանի՝ թէ դէպքին օրը Աւստրիական շոգենաւէն երկու դիւնուած հայեր բերել տալով՝ տաճիկներուն դէմ հանած է և թէ քաղաքին բոլոր յեղափոխականներն իրեն ծանօթ են:

27, 28. Յակոբ Տէր Մկրտչեան, 35 տարեկան, յանձնակատար: Տօքսէօր Եղիա Էնչերեան՝ բժիշկէ՝ Այս երկուքը կոտորածէն յետոյ Կիւզէլ-Սարային մէջ խօսած են իրք թէ՛ յերբոր մենք բանտէն դուրս ելնենք՝ առաջին գործերնիս պէտք է ըլլայ կոտորել տաճիկները:

29. Հաճի Մարտիրոս Արաբեան, 80 տարեկան, վաճառական է: Ասիկա յանցաւոր կը նկատուի անոր համար, որ դէպքին օրը իր անէն երկար և զորաւոր գիմադրութիւն մը տեղի ունեցած է Ջինուորները ասոր տան վրայ էր, որ թնդանօթ շտկած էին:

30. Յարութիւն Շահբիկեան, 42 տարեկան, փառատաբան: Վաճառատանի, թէ գիւղերու մէջ քարոզող և քաղաքի ժողովուրդն ալ գրգռող յեղափոխականներէն է: Ասոր վրայ ծանրացուցած են և մի շաքք անհեթեթ զոպարտութիւններ, որոնք ըլլած են միմիայն խողադուտ վաչիէն, նեմիլիպոզէ վաշխառու Օսմանին և այլ նախանձու մարդկանց կեխառու խաղերէն:

31. Հմայեակ Ֆէթմաճեան, 21 տարեկան, անպարտ: Իր բնակած անէն գէնքեր նետուելուն՝ կը բանտարկուի: Այս փափկասուն, ողորմելի արարածը դուրս ելնելէ խորհրդով շարունակ ներաւձ պատրաստ էր իր փոստ անձը փրկելու համար՝ դիմել նոյն իսկ աննիւրիկ Էրզնկերու: Յայտնի լրտես և ունիւրձ հայ-կաթողիկէ Պետրոս Խանեանը, ծանօթանալով անոր հոգեկան վարակութեանը, իրը խորհուրդ, կառաւարէ, որ եթէ կոտորածէն անցանքներուն անուններն կարողանայ ղնուորական

ատենին յայնեւ, շուտով բանտէն կազատւի, եթէ ոչ յաւիտեան բանտը կը մնայ:

Այս առաջարկը Հմայեակին հաւանութեանը արժանանալով, առանց դանդաղելու դիմեց ատենին և յայտարարեց՝ թէ կօմիտէի անդամներն 1) Մանուկ Թաթոսեան, 2) Յարութիւն Շահրիկեան, 3) Յովհաննէս Պրկը-քիւն, 4) Տէր Վահան քահանայ Խնոյեան, 5) Յակոբ Աստուրեան, 6) Ստեփան Եղիազարեան և 7) Գրիգոր Վարդանեան անձնաւորութիւններն են: Զինուորական ատենը այսքանով գոհ չլինելով, պատւիրեց ռազմամթերքներու թագստոցի մասին ալ տեղեկութիւն հաղորդել:—Թշուառականը այսկերպ անյաջողութեան բախելուն՝ զգաց թէ իր դերը ո՛ր հասած է, հասկցաւ արած սխալ քայլը և յիմարաբար սկսաւ ծեծել գլուխը:

Որքան որ իր խօսքերէն մի նոր ծանր հետեանք առաջ չեկաւ, սակայն ամօթէն ու խղճի խայթէն տառապւած՝ ուզեց անձնասպան ըլլալ և միևնոյն ատեն վախնալով, որ մի գուցէ իր պախարակելի վարմունքը հրապարակ ելնէ, աճապարեց յետ պահանջել խոստովանագիրը՝ ծանուցանելով, որ քանի մ'որ առաջ յայտնածներն բոլորովին յերիւրած բաներ են:

32. Հաճի Վարդան Անանեան, 46 տարեկան, ճաշարանապետ (պարսկահայտակ): Ասոր մի քանի թիւրք թշնամիներն կը վկայեն՝ թէ իր ճաշարանէն ալ հրազէն պարպւած է:

33. Յակոբ Շաւարշ, 40 տարեկան, յանձնակատար: Դէպքին օրը իր բացակայութեան միջոցին գրասենեակէն (իրը թէ) զէնք պարպւելուն պատասխանատու բռնւած է:

34. Արշակ Ֆիլիսեան, 34 տարեկան, ուսուցիչ: Կոտորածին յաջորդ օրը Կոստանտինօֆի խանը բանտարկւելուն, հրապարակին վրայ փուլած անձանաչելի դիակներու թողած տպաւորութենէն մտային խանգարում մ'ունեցաւ և ինքզինքը պատուհանէն վար նետեց:— Կառավարութիւնը այս շարժումով կուզէ բացատրել թէ կասկածելի մէկն է:

Բանտէն արձակւած են Վարդգէս Տէր Օհանեան, հաճի Մինաս Թիւթիւնձեան և Պետրոս Աւետիքեան:

Տ Ի Գ Ր Ա Ն Ա Կ Ե Ր Տ

I

Ինձ կերևի թէ՝ բարենորոգումի ամեն մի յօդուածի տրամադրութիւնը, կողոպուտ, աւերում, սպանում և փչացում եղած է հայուն համար: Դեռ բարենորոգում ըսած անւանական կամ երեւակայական կարգադրութեանց և բարեփոխութեանց պաշտօնական յայտարարութիւնը մէջ չը հասած, դեռ հազու հազ անոր հեռաւոր ձայնն, անդունդէ լսող խուլ որոտումի նըման՝ մեր ականջին՝ դիպած, երբ ժողովուրդը, այդ դաւառող տառապեալը, կսկսէր երեւակայել այն կարծեցնալ հանգիստը և սփոփը, որ արդար իրաւունքն է

ամեն ժողովուրդի: Բայց փոխանակ մեր ակնկալութեանց այնպիսի անագորոյն հարւածներու տակ կը ընկճեն հայութիւնը, որ պահ մը կարծեցինք, թէ դարեր ետ կերթայ մարդկութիւնը:

Թէև այդ մահացու շանթերը սնօրինւեցան գրեթէ ամբողջ թշուառ հայաստանցիի գլխուն, բայց կարծեմ, իր անլուր աւերումներով, կոտորածներով՝ ամենէն աւելի փնասուղը Տիգրանակերտ եղաւ՝ իր մօտակայ և հեռակայ հայաբնակ գիւղերով, աւաններով և այլն. հոս կատարած ամբողջ խժոճութիւնները կարծեմ դեռ չպարզւեցան քաղաքակիրթ աշխարհին առաջ այնքան, որքան միւս բաղդակից գաւառական անկիւնները. ահա այս պակասը լրացնելու պաշտօնով կը փութամ գրիչը ձեռքս առնել, թէև վերաւոր, քէթ քանի մը տեղեկութիւններ հաղորդել ընթերցող զգայուն հասարակութեան:

II

Հոկտ. 17-ին քաղաքի հիւսիսակողմը, «Մերան-Ռու» կողած թաղի թիւրք բնակիչներէն «Հիւսէյն» անուն անձ մը, որ իբր թէ բարենորոգման ծրագիրն ընդունւելու խնդրէն զւրացած, կէս օրին քաղաքիս կեդրոնը դանւած «Ուլի» ճամբ հոյակապ մզկիթի բակին մէջ կատարել ու հրէշային կերպարանքով՝ սա պէս բառեր կը պոռթկայ՝ «տէվէթ կեա՛վուրէրէ ալթը վիլայէթ վէրմիշ, պիզ կապուլ էթմիտիբի...» պետութիւնը կեա՛վուրներուն վեց նահանգ տւած է, մէնք չե՛նք ընդուներ և այլն: Այս խօսքերն՝ որուն կը կցէ կայսեր համար հայհոյալից բառեր, արտասանելով մեծաձայն, իսլամ ահաբէն ամբոխի մը առջև, հրաւէր կը կարդայ ամբողջ «ուսմէթի մուհամէդներուն», իրեն աջակցելու՝ որպէս զի ընդդիմանան կայսեր իրադէին և թող չի տան, որ իրենց հողերն ձգւին կեա՛վուրներուն: Ամբոխն հետզհետէ սոււարացաւ երեքհազարէ աւելի բազմութեամբ, ցոյց կուտայ՝ թէ տրամադիր է առաջարկւած հրահանգներն գործադրելու: Նոյն պահուն հանրագիր մը կը պատրաստուի և բոլորէն, ակնթարթի մը մէջ ստորագրւելով, կը ղրկուի կուսակալ՝ Էնիս փաշային՝ սուլթանին հաղորդելու համար իրենց արդար բողբոջը:

Կերևի 3 օր յետոյ, ճիշտ ուրբաթ, հոկտ. 20-ին, պատասխանն հասած էր, անշուշտ, յուսացածէն աւելի, նպատակաւոր մահմեդական խուժանին պահանջմանց, քաջալեր մը խուժանին հայրենասիրական խրժոճական ընթացքին: Բայց մահմեդական ժողովուրդը իր բարբարոսական գործունէութեանց հետ չուզեց ձեռքէ հանել կարգ մը վարպետորդի հնարքներ՝ որով հայերն կամբաստանէին իբր նախայարձակ: Նոյն օրը 8-10 թիւրք երիտասարդներ՝ հայու տարազով, սպառազինւած, կը ղրկուին քանի մը ճամբաներու վրայ յարձակում տալու՝ իբր հայ խուլարարներ և ահա, անմիջապէս, իբր թէ՛ այդ ենթադրեալ հայ խուլարարներու ապօրէն ընթացքէն կարի յուզւած, թիւրք խուժանը, նախապէս պատրաստւած և զինեալ, նամազի ատեն մզկիթներէն ելնելով, կէս օրին (ժամը 7-ին ը. թ.) ահաբէն խառնիճաղանձ բազմութեամբ և վայրագութեամբ կարշաւէ նախ խանութներու, կրպակներու, վաճառատուններու վրայ, կողոպտելով, թախնելով ձեռք ընկածը, ընդիմացողը կամ փախչողը սպանելով:

զարնելով, վիրաւորելով, հարաւածելով: Խանութներու կողպուտով չբաւականացած՝ շատեր կը յարձակին ժողովայն, աւելի անպաշտպան տուններու, բնակարաններու վրայ, կողպուտելով, աւերելով կամ փլայտակ ընելով: Այլ հոս կը թողում անգուլթ, անհաւատ, քարասիրտ եւրոպացիին երեւակայել ժողովրդային այն աղէկաւոր, սրտակեղէկ, հեծեծանկներու, ողբերու, կոծերու վայնասուն՝ որուն ի լուր, ամենէ քարասիրտ մարդիկ իսկ չէին կարող չարտասուել: Քանի մը ժամեր յետոյ այս վայնասուններուն, կը յաջորդէ բոցախառն, յարաճուն հրդէհի մը ճարձատին: Կառավարական հրամանով զինւորներն կարտօնէին ամբողջ խանութներն հրձգելու: Անշուշտ թաքուն մեքենայութիւն մը կար, դադարկ կրպակները այրելու մէջ: Հրդէհը մինչև առաւօտ, աղատ արշաւանքով, ամբողջ խանութներն լափած էր, որոնք բոլորն ալ տախտակ էին: Արդէն իմացած էինք, թէ պարոպատուններու առջև, որոնք մինչև այն ժամանակ ամրապէս փակած կը մնային, անհամբեր կսպասէին «Չիլան» ըսած գաւառի շէյխի արքանեակ հրոսակախմբերը, 8000 է աւելի, որոնց առջև բացելով դռները, թոյլ կտրուի երթալ օգնել թիւրք եղբայրներու կողպուտին, աւերումին և կոտորածի գործըն՝ պահանջած սահմանին հասցնելու համար:

Կարծեմ, ինչպէս ամենուրէք, նմանապէս քաղաքիս մէջ այս արդար բարձրագոյն հրամանով կատարւելն մասամբ ապացուցած պիտի ըլլամ, եթէ ըսեմ, թէ կառավարութիւնը իր ոստիկան, հեծեալ զինւորներով՝ ամբողջ 4 օր դռնփակ մնաց իր պարսպապատ բերդը ըսած կառավարատունը, ականջ չդնելով բնաւ հեծեծանքի աղաղակներուն, և բաղմաձիգ հրացաններու գոռ պայթիւնին, որոնք կարկուտի պէս կը տեղային հայերու գլխուն: Այդ մահափիւռ օրերու մէջ, որոնց յիշատակն սարսուռ կազդէ մտքի, ինչ հարստութիւններ փչացան, ինչ գոյքեր, կարասիներ ոչնչացան և ինչ կեանքեր, հոգիներ, անյուր, աներևակայելի տանջանքներով՝ յօշոտուեցան, խողխողուեցան քիւրդ և թիւրք խուժանի միացած սուրերու հարաւածներուն ոսակ, քանին՝ զընկեցան իրենց սիրական մարտիրոսներն դէթ իրենց ձեռքով թաղելու երջանկութենէն:

Օրերով փողոցի շուններուն առջև դիակներ, մարմնի անդամներ, քաշկուտեցան, անոնց կեր տալով: Այլ կը համարձակէր ոտք կոխել փողոցն, դիակներու թւին վրայ հատ մ'ալ աւելցնելու վտանգէն սարսափած:

Թէ կեանքի, թէ ինչքի կողմէ՝ ամենէն աւելի մեծ կորուստ տուողներն եղան այն հայեր, որոնց բնակարաններն պարսպին ձօն, կամ բազմաթիւրք թաղերու մէջ և կամ քաղաքիս կեդրոնին ձօն՝ Ս. Կիր. Մայր-եկեղեցիին թաղերէն հեռու լինելու դժբախտութիւնը ունեցած են: Այդ թաղերն, անգուլթ յարձակումին առաջ ինքզինք պաշտպանելու բոլոր միջոցներէն զուրկ, և արդէն, մեծ մասամբ, աղքատիկ բնակիչներ ըլլալով, սոսկալի աղէտներու ենթարկւած են: Շատերու գոյքը, ինչքը կողպուտելէն և ձեռքերնին ինկածները սուրէ անցնելէ յետոյ, քարիւղով բնակարաննին այրած, աւերած և կամ քանդած են անբնակելի կերպով: Իսկ այն թիւն, որ իր միակ հոգին, գերմարդկային ճիգերով կրցած է ազատել, ապաստանած է հայ թաղերու մէջ և ումանք ալ Անգլիական հիւպատոսարանը, որ պաշտպանւած էր քանի մը զինւորներով: Ասոնք իրենց

անցքին վրայ փողոցներու մէջ, հանդիպած հայերն ջարդելու, կտրելու, գնդակահար ընելու պարտականութեանց մէջ բնաւ չեն թերացած, բան մը՝ զոր կրնայ ապացուցանել նոյն ինքն՝ հիւպատոսը, որ ականատես եղած է իր բնակարանն առջևի փողոցին մէջ տեղի ունեցած նմանօրինակ խժուժ տեսարաններու:

Քաղաքի հարաւարեւմտեան կողմը, թիւրք բազմամարդ թաղերով շրջապատուած Ս. Սարգիս եկեղեցւոյ թաղին վրայ, աւերող խուժանը, կրցաւ դրօշմել իր անգթութիւններու ամբողջ երանգները: Եկեղեցին կողպուտելէ, աւերելէ զինի, Տէր Յարութիւն քահանան և ժամկոչը կը յօշոտէն: Գրեթէ միևնոյն վիճակին կրենթարկեն նոյն թաղերի հայերն: Իսկ հիմա խօսք կայ՝ եկեղեցին ճամփի վերածել և անունը «Էնիս փաշա» ճամփի դնել. պարագայ մը, որ եթէ իրագործուի, կրնայ բանովն պերճախօս լինել յաւերժացնելու համար քաղաքիս աւերումի դէպքին մէջ, տեղւոյն կուսակալի անձնէր գործունէութիւնը:

Խ Ն Ո Ւ Ս

Աշխատում եմ մի համառօտ ակնարկ դրել դաւառիս և շրջակայ տեղերի մասին:

Հոկտեմբերի 7-27 գաւառիս ամբողջ հայաբնակ գիւղերը ենթարկուեցին, աւերումներ, թալանի և սպանութիւնների, բացի մի երկու գիւղերից, որոնք անվնաս մնացին, այնպէս որ այժմ թալանւած գիւղերում միայն մնացել են չոր ու ցամաք տները և քաղցած մընացած, սպանութիւնից ազատւած մարդիկ: Այդ ոքի չէ մնացել՝ ոչ անասուն, ոչ տնային կահ կարասիք, ոչ էլ ցրտից գոնէ պաշտպանելու մի կտոր փալաւ: Գիշերում են իւրաքանչիւրն իրենց տներում, առանց անկողնի խոտերի վրայ: Այժմ ամբողջ գաւառը ներկայացնում է աւերումների մի արևնոտ տեսարան, այս ու այն կողմ ընկածների դիակներով: Գաւառումս ըսպանւածների թիւը հասնում է 200-ի: Բողեշում սպանւածների թիւը հասնում 2000-ի: Սարսափելի դրութեան մէջ է Ախլաթը: Մեր տեղեկութիւնների համաձայն Կարինը դեռ ևս պաշարման դրութեան մէջ է: Այս գաւառի ժողովուրդը, շնորհիւ նոր դուրս եկած մատնիչների և նրանց արած չարագործութիւնների, մեծ մասամբ յուսահատուած են:

Ինչպէս լսում ենք քրդական վտահայի աղբիւրներից՝ այս բոլոր չարագործութիւնների գլխաւոր շարժառիթը և թելադրիչը եղել է Շաքիր փաշան, որը Պոլսից դուրս էր եկել Հայաստանի դրութիւնը խաղաղացնելու: Բոլոր չարագործութիւն անողները Համիդէի հեծելախմբերն են, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է 150-400 մարդկանցից, սրանք երբեմն երբեմն միացած կանոնաւոր զօրքերին՝ ցերեկով յարձակում էին գործում այս ու այն կողմ: Իւրաքանչիւր գիւղի թալանումը տւում էր 3-4 օր, որովհետև հայերի մէջ պահած ցորեններն անգամ չէին թողնում: Համեմատած Շաքիր փաշայի «սպանեցէք և ոչ թէ թա-

լանեցէք՝ պատերին, որ ասել է համիդէների բիրա-
շէներին և զպաղատաններին, քիւրդերը էլի աւելի բա-
նօրհոյ՞ վարւեցին, քան իրենց կազմակերպող անխիղ-
ճը: Թէև կառավարութիւնից պատերա՞ծ էր ժողովորդին
որ սպանւած դիակները առանձին առանձին թաղին
բայց գոնէ կառավարութեան աչքից հեռացնելու հա-
մար 10-20 դիակներ պահւած են առանձին հորերում:
Այսպիսի մի կրիտիկական ըզպէս մի խօսքը՝ մի ակնա-
թեթև և յոյսը, ժողովորդին կենդանութիւն կարող է
ներշնչել:

Չնայած հայերի անխնայ կոտորւելուն, այնուամենայ-
նիւ մի զօրեղ սարսափ տիրում է մահճեղական տարրի
վրայ, որովհետև լուր է տարածւել, թէ Ռուսաստանից
անցնելու են 7-800 յլան-Ֆիրաներ⁴:

Բանտարկւած են մի քանի հոգի, շատերին էլ հար-
ցաքննելուց յետոյ արձակել են: Խանութները համա-
րեա թէ դեռ ևս փակ են մնում:

Մուշից ստացած նամակից քաղում ենք հետևեալ
տեղեկութիւնները.— «Նոյեմ. 3-ին, ժամը 5-ին, պա-
տահեց այստեղի դէպքը հետևեալ կերպով.— մի քիւրդ
տանում է ատրճանակը մի հայ զինագործի մօտ շինել
տալու. զինագործի հարցին, թէ յի՞քն է ատրճանակը
թէ դատարկ⁴, քիւրդը պատասխանում է, որ դատարկ
է. իսկ երբ զինագործը միամիտ քաշում է չախմախը,
պայթում է ատրճանակը և թիւրքերը արդէն այդ նը-
շանի վրայ պատրաստ. կը յարձակին հայերի վրայ, ո-
րոնք վաղուց նախատեսած լինելով իրենց զինու՞ն գա-
լիքը, մեծ մասամբ խանութները չէին բացէր, բացող-
ներն էլ զգուշանում էին. իրարանցումը սկսեց շու-
կայում, սարսափելի իրարանցում էր տիրում թաղերում:
Բարեբախտաբար վրայ հասան միւթեւորիֆը, զինուորա-
կան հրամանատարը և թաքուրաղասին և կարողացան
առաջն առնել. սպանւեցին 6 վիրաւորւեցին 36 հոգի.
քաղաքում թալան չէ տեղի ունեցել, միայն գիւղերն են
թալանւել, սպանւածների թիւը մեծ չէ դաշտում: Ս.
կարապետի վանքն էլ թալանւած է⁴:

Հետագայ նամակն ուղղւեցաւ «Հնչակի» խմբագրու-
թեան, հարկ կը համարինք եւ ձեզ ուղարկել:

Նամակ «Հնչակ»-ի խմբագրութեան
Երիզայ, 11 փետրւարի 1896 թ.

Այս ամենամանր ըզպէս չենք ցանկար երկարօրէն
«Հնչակ»-ի յունւար 24 համարին պատասխանել:
Նախ ըսենք որ («Հնչակ») ի ծրագիրն մեզ դեռ ծանօթ չէ
եւ որքան որ լսած ենք ասլախնայորոնացումը ձեր մօտ ըն-
դունելի չէ եղած, այս եւ ասոր նման մի քանի անտանելի
պատճառներէ թելադրւած՝ ձեզ չմտնալով, ուզեցինք
կապ հաստատել միայն դաշնակցականներուն հետ, որոց
ուղղութիւնը մօտաւորապէս մէկ ու կէս տարիէ ի վեր կը
դաւանինք:

Խմբագրութիւնը թիւրքիմացած էր տեղւոյս շարժումներն
իր անւամբը մկրտել. ըստ մեզ այդ կարգի հայիւններն թէ-
եւ յեղափոխական զգացումէ դուրս են՝ սակայն սխալ
հասկացողութեանց տեղիք չունիւր համար, կը ինդրենք, որ
զմեզ ձեր սրբանայրութեան, ներքեւ հրաւիրելու ջնքին
գոնէ խնայէք:

ՀԱՅ. ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ
Ե Ր Ի Չ Ա Յ Ի Կ Օ Մ Ի Տ Ի

ՆԻՒՐՈՍԻՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ
Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական
անդուկի մէջ ստացւած են.

Պ. Կաղանդ Հատիկեան 27 մ. 20 օսմ. ոսկի,
Կարմիր Դերձան 25 օսմ. ոսկի, Խողկաղին 100 օսմ.
ոսկի.

Դիլ. ք-ից. Կանանց Աստղ խմբից 15 ըուբլի, Թ.
ք. մի խումբ կանանց ձեռքով հանգան. 32 ըուբլի,
մի խումբ ուսանող օրիորդների ձեռքով 24 ըուբլ.:

Վարդ. ք-ից 150 ըուբլի: Արվ. ք-ից 1000 ըուբլի:
Խար. ք-ից 40 ըուբլ., Ոսկանապատից 1300 ըուբլ.,
Քշ. ք-ից 500 ըուբլ., Ախց. ք-ից Վրէժ խ. 207 ըուբլ.,
Նոյն տեղից՝ Բանդից 335 ըուբլ., Պ. Տ. Գ. -ից, Արա-
մից 140 ըուբլի, Աստղիկ խմբից 8 ըուբլ.:

«Նաւահանգստի» անդուկում 1895 թ. ընթացքում
ստացւել է 1610 ըուբլի, նոյն անդուկում «Ճորոխ»
խմբից 270 ըուբլի:

Արշակաւան քաղաքի Կեդր. սնդ. մէջ ստացւած են.
Վարդանոյշ 40 դճ., Ջրահ խ. 55 դճ., Արշալոյս
խ. 40 դճ., Ասեղ 20 դճ., Ճարտարապետ 5 դճ.,
Հացագործ 10 դճ., Թաթուկ խ. 72 դճ., Լոյս 20 դճ.,
Մահճակալ 20 դճ., Էդէ 200 դճ., Անաբալեան 60
դճ., Օրժանդակ 20 դճ., Պսակ 40 դճ., Կեղծ 20 դճ.,
Գրիչ 2 օսմ. ոսկի, Ծծան 10 դճ., Բլուր 20 դճ., Տա-
ճատ 20 դճ., Յոննանեան խ. 140 դճ.:

Միւնիքից.— Տուգանք 2 մէջիդիէ, Ժիբայր 1 մէջիդիէ,
Խոսրով 1 1/2 մէջիդիէ, Կարս խմբէն 2 1/4 մէջիդիէ, Դա-
տաւոր 1 մէջիդիէ, Հուր խմբէն 3 մէջիդիէ:

Ամերիկ.— Ֆիցբուրգ—Մ. Ռ. 50 սէնթ., Ս. Թ. 25
սէնթ. Ռ. Ն. 25 սէնթ. Ա. Ռ. 1 դոլար:

Օդ. հայ պանդուխտ մշակներից 63 ըուբլի:
Գետակ քաղաքից, Հոսանքի միջոցով 20 ըուբլի:

Վիշապ քաղաքի Կեդրոնական անդուկի մէջ ստաց-
ւած են.

Ջրվէժ խ. 60 դճ., Բարթալեան խ. 25 դճ., Յա-
նաջարիմասէր խ. 80 դճ., Նիզակ խ. 50 դճ., Արա-
րատ խ. 40 դճ., Արամեան խ. 25 դճ., Անանուն խ.
50 դճ., Վարդ 20 դճ., Կոկոն 10 դճ., Ոմե 10 դճ.,
Գլխարկ 200 դճ., Գինեպան 5 դճ., Սեպուհ. 10 դճ.,
Սթեփան 10 դճ., Հայրուհի 10 դճ., Նոյեմի 5 դճ.,
Ելպիս 5 ևս 20 դճ., Մելքոն 20 դճ., Գ. Ովկեանոս
10 դճ., օր. Հայրենասէր 46 դճ., Սէր 20 դճ., Պահասան
10 դճ.:

Դաշնակցութեան անձամբներէ ինչպէս է թղթակցութեան
և նիւստութեան նամար դիմել.

Armene-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

L. Boole, 10, Russell Road, Kensington, London W

Վիլնոյա, Դաշնակցութեան ազատ սուրբան